23 ՅՈՒԼԻՍ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 125(5208)

Ազգ Azg

ISSN: 1829-1651

# Մեկ շնչի հաշվով Ղարաբաղում ականներից ավելի շատ մարդ է տուժում, քան Աֆղանստանում

Ամերիկայի հայ դատի հանձնախմբի հաղորդմամբ՝ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի պետական արտաքին գործառնությունների ենթակոմիտեն առաջարկել է Սպիտակ տանը 2014-ին զգալիորեն կրճատել արտաքին բյուջեի համար նախատեսված ֆինանսական ծախսերը: Դրա մասին դեռեւս նախորդ տարի հայտարարել էր Օբամայի վարչակազմը՝ խնդրելով բյուջեն կրճատել 20 տոկոսով:

Չնայած երկրներին հատկացվելիք գումարների չափը դեռեւս չի հրապարակվել, սակայն, ըստ որոշ աղբյուրների, Հայաստանի Հանրապետությանը եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը տրամադրվելիք գումարները կկրճատվեն եւ որոշ ծրագրերի առումով հատկացումները կնվազեն շուրջ 60 տոկոսով:

Խնդրին արդեն արձագանքել են ԱՄՆ-ի հայ համայնքն ու Ամերիկայի հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը՝ հավաստիացնելով, որ պաշտպանելու են Հայաստանի եւ հայերի շահերը:

Նրանք առաջարկում են, որ ԼՂՀ-ին տրամադրվելիք աջակցությունը կազմի 5 միլիոն դոլար, Հայաստանինը՝ 50, աջակցություն ստանան նաեւ Սամցխե-Ջավախքի հայերը (Վրաստանին հատկացվելիք գումարի 10 տոկոսի չափով), նրանց համար աշխատատեղեր բացվեն, նաեւ միջոցներ տրամադրվեն Մերձավոր Արեւելքում վերջին տարիներին վերիվայրումների եւ քաղաքացիական պատերազմի հետեւանքով տուժած հայերին եւ այլ քրիստոնյա համայնքների ներկայացուցիչներին. մասնավորապես նրանց տրամադրվի մարդասիրական եւ վերաբնակեցման աջակցություն:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչ Քեյթ Նահապետյանը վերջերս Արցախում հանդիպել է փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանին, ԱԳ նախարար Կարեն Միրզոյանին եւ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանին: Նահապետյանն այցելել է նաեւ HALO Trust կազմակերպություն, որը տարեկան 2 միլիոն դրամ է ստանում ԱՄՆ-ից Ղարաբաղում ականազերծման խնդիրները լուծելու նպատակով: HALO Trust-ի ներկայացրած վիճակագրությամբ Ղարաբաղում մնացած ականներից դեռեւս բազմաթիվ երեխաներ, քաղաքացիներ են վիրավորվում:

Համաձայն HALO Trust-ի տվյալների, մեկ շնչի հաշվարկով Ղարաբաղում ականներից ստացված վնասվածքների մակարդակը գերազանցում է Աֆղանստանին: Ամերիկայի հայ դատի հանձնախումբն առաջարկում է ամերիկյան կառավարությանը՝ ուշադրություն դարձնել այս խնդրին եւ Ղարաբաղին տրամադրվելիք 5 մլրդ դոլարի շրջանակներում հաշվի առնել նաեւ այս մտահոգությունը: Հ. Հ.

# Հեշտ փողերը պտտեցրել են գերշահույթ ստացողների գլուխները

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Զարմանալի է հայոց քաղաքական դաշտը: Նախագահական եւ խորհրդարանական ընտրություններից որոշ ժամանակ անց նա այնպես ընկավ կոմայի մեջ, որ նրան արթնացնել առանց բժշկի միջամտության թերեւս անհնար է թվում: Որոշ վերապահումներով: Հատկապես վերջին շրջանում, երբ տեղի են ունենում իրադարձություններ, որոնց վերաբերյալ քաղաքական ուժերի տեսակետը կարեւոր է, մենք տեսնում ենք լրիվ հակառակ պրոցես՝ կուսակցությունները լռում են, անձերն ու քաղաքական ակտիվիստները (շատ անգամ՝ նաեւ տարերային ու անհարկի, մի տեսակ անղեկ նավի նման) անընդհատ վերցնում են նորանոր իրադարձությունների պասը: Ժամանակին, դեռ նախագահական ընտրությունների ընթացքում եւ ավելի վաղ արձանագրել էինք, որ մեր կուսակցությունների մեծ մասը չի կարողանում հասնել ընտրողի պահանջի հետեւից, չի դառնում հասարակական կյանքի գեներատորը: Վերջին մի քանի դեպքը ու դրանց շուրջը ստեղծվող հասարակական ակտիվությունը, որի հետ մեր կուսակցությունները որեւէ կապ չունեն, վերստին նորացնում են մեր հին դիտարկումները:

Ամենաթարմ օրինակը տրանսպորտի թանկացումն է, որ խփում է բոլորիս գրպանին եւ որի մասին ով ասես խոսեց, բացի մեր կուսակցությունների հիմնական մասից (խոսողների մասին տեղյակ ենք), ովքեր հապաղում են բերել իրենց տնտեսական հիմնավորումները՝ որպես տրանսպորտի նոր սակագնի պաշտոնական հիմնավորման ալտերնատիվ: Տես էջ 2



# Մոնտեվիդեոյում կհիմնադրվի Հայոց ցեղասպանության թանգարան

Հուլիսի 17-ին Ուրուգվայի նախագահական պալատում տեղի է ունեցել հանդիսավոր միջոցառում՝ Մոնտեվիդեոյում Հայոց ցեղասպանության թանգարան հիմնելու մասին պաշտոնական հայտարարության առիթով: Հայաստանի արտգործնախարարության մամուլի հաղորդագրության համաձայն՝ միջոցառմանը ներկա են եղել Ուրուգվայի մշակույթի եւ կրթության նախարարը, Արգենտինայում եւ Ուրուգվայում Հայաստանի դեսպան Վահագն Մելիքյանը, կառավարության, օրենսդիր մարմնի երկու պալատների, հասարակական կազմակերպությունների, ուրուգվահայ համայնքի եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Հանդիսության սկզբում ընթերցվել է Ուրուգվայի Նախագահ Խոսե Մուխիկայի ուղերձը, որով ողջունել է այս կարեւոր նախաձեռնությունը եւ նշել, որ թանգարանի հիմնումը կօգնի վառ պահելու հիշողությունը մի ցեղասպանության մասին, որը ցնցել է համայն մարդկությանը:

Հայաստանի կառավարության անունից խորին երախտագիտություն հայտնելով Ուրուգվայի իշխանություններին եւ նախաձեռնության հեղինակներին՝ Հայաստանի դեսպանը նշել է, որ սա եւս մեկ կարեւոր եւ պատմական քայլ է արդարության վերականգնման ճանապարհին եւ հերթական հիմնավոր պատասխանը ժխտողականությանն ու այլասյացությանը:

Թանգարանի կառուցումը սկսելու նպատակով առաջիկայում կձեւավորվի պետական հանձնաժողով:

Վ. Պ.

# Ինչո՞վ են ներդնողներին գրավելու Հայաստանի ազատ տնտեսական գոտիները

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ազատ տնտեսական գոտին, որի մասին պարբերաբար խոսվում էր վերջին մի քանի տարիներին, արդեն իրականություն է: Հիշեցնենք, որ այս ծրագրի գործնական հիմքերը դրվել են 2011-ին, երբ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը եւ Ռուսաստանի տրանսպորտի նախարար Իգոր Լեւիտինը հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի նիստում քննարկեցին Ռուսաստանին փոխանցված հայաստանյան ձեռնարկություններում ազատ տնտեսական գոտի ստեղծելու հարցը: Անցած ժամանակահատվածում հաղթահարվեցին բոլոր դժվարությունները, եւ Հայաստանի կառավարության նախորդ նիստի ժամանակ որոշում ընդունվեց «ՌԱՕ ՄԱՐՍ» (այսպես կոչված «ռոբոտների գործարան», Երեւան, Րաֆֆու 111) եւ «ԵրՄՄԳՀԻ» («Մերգելյան ինստիտուտ», Երեւան, Հակոբ Հակոբյան 3) ընկերությունների տարածքներում օգոստոսի 1-ից ազատ տնտեսական գոտու գործունեության մեկնարկի մասին:

Կառավարության որոշմամբ այդ գոտիներում կազմակերպիչ է ճանաչվել «Սիտրոնիկս» ընկերությունը, որը լայն ճանաչում ունի աշխարհում: Մասնավորապես նրա ներկայացուցչություններն ու մասնաճյուղերն են գործում աշխարհի 30 երկրներում, ընկերությունն արտահանում է իրականացնում ավելի քան 60 երկիր, հասույթը 2010-ին 1,1 մլրդ դոլարից ավելի է կազմել, աշխատակիցների ընդհանուր թիվը մոտ 8000 է, որոնցից ավելի քան 1000-ն աշխատում են հետազոտությունների եւ մշակումների ոլորտում: Տես էջ 8

ԼՈՆԴՈՆ

# Ազնավուրը՝ «Ալբերտ Հոլում»



Աշխարհահռչակ երգիչ, դերասան Շառլ Ազնավուրը ելույթ է ունենալու Լոնդոնի «Ռոյալ Ալբերտ Հոլ» համերգադահլիճում, տեղեկացնում է «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Ութսունիննամյա լեգենդար երգիչը հրաժեշտ էր տվել բեմին, սակայն երիտասարդական ավյունով շարունակում է ժամանակ առ ժամանակ հայտնվել աշխարհի տարբեր համերգադահլիճներում: Անգլիայում նա չէր եղել վերջին 25 տարիներին:

Ազնավուրը ընդամենը օրեր առաջ մասնակցեց Երեւանում կայացած «Ոսկե ծիրան» կինոփառատոնին, որի բացմանը ցուցադրվեց նրա մասնակցությամբ «Կրակել դաշնակահարի վրա» ֆիլմը: 10-րդ հոբելյանական կինոփառատոնի մեկնարկը նշանավորվեց նաեւ իր անվան հրապարակում «Ազնավուրի աստղի» բացման արարողությամբ: Հ. Ծ.

# Գերմանիայի հետախուզությունն օգտվել է ԱԱԳ լրտեսական ծրագրից




Գերմանիայի Դաշնային հետախուզական ծառայությունը (BND) եւ Սահմանադրության պահպանման դաշնային գերատեսչությունը օգտագործել են ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) լրտեսական ծրագրերից մեկը: Այդ մասին շաբաթավերջին հաղորդեց գերմանական «Շպիգել» հանդեսի կայքէջը՝ վկայակոչելով գաղտնի փաստաթղթեր:

Հանդեսի տվյալներով՝ գերմանական հատուկ ծառայությունները ստացել են XKeyScore ծրագիրը, որը մասնավորապես թույլ է տալիս հետեւել համացանցից օգտվողների հարցումների պատմությանը, կալանել նրանց հաղորդագրությունները եւ արձանագրել ցանցային ամեն տեսակ գործունեություն: BND-ի աշխատանքում ծրագրի ներդրման նպատակն էր «ընդլայնել BND-ի հնարավորությունները հակաահաբեկչական թիրախների համատեղ հետապնդման գործում ԱԱԳ-ին աջակցելու համար»:

Այժմ հայտնի է, որ համացանցի գերմանական հատվածում ԱԱԳ-ն ստուգել է մոտ 500 մլն հաղորդագրություն, եւ դրանց մեծ մասը կալանված է եղել XKeyScore-ի միջոցով:

«Շպիգելի» լրագրողների ձեռքն անցած փաստաթղթերից նաեւ պարզվում է, որ գերմանական հատուկ ծառայությունների եւ ԱԱԳ-ի փոխգործողությունը վերջերս աշխուժացել է: Ամերիկյան գործակալության հունվարյան զեկույցներից մեկում նշվում էր, որ BND-ն «Գերմանիայի կառավարության վրա ճնշում գործադրելու աշխատանք է կատարում, որպեսզի փոփոխի տվյալների պաշտպանությանն առնչվող օրենքների կիրառությունը եւ ավելի մեծ հնարավորություններ ապահովի օպերատիվ տեղեկությունների փոխանակման համար»:

BND-ն, Սահմանադրության պահպանման դաշնային գերատեսչությունը եւ ԱԱԳ-ն հրաժարվել են «Շպիգելի» էջերում մեկնաբանել քաղաքացիների զանգվածային գաղտնալսման նպատակով հետախուզությունների համագործակցելու վերաբերյալ հրապարակված լուրերը: Հանդեսի տվյալներով, 2013-ի ապրիլին ԱԱԳ-ն BND-ի 12 բարձրաստիճան աշխատակիցների պատվիրակությանը հրավիրել է մասնագետների հետ հանդիպման՝ «տվյալների ստացումը» քննարկելու համար:

Գերմանիայի իշխանությունները պնդում են, թե իրենք համացանցի օգտատերերի լայնընդգրկուն լրտեսման ծրագրի մասին իմացել են ԶԼՄ-ներից: Պ. Ք.

## Ընթացիկ



«Գորիս» բուժկենտրոնը

# Երեւան եկող հղիների թիվը նվազում է

Մինչ Երեւանում ու տարբեր մարզերում քննարկում են ծննդօգնության հավաստագրի տեղայնացման որոշումը, Գորիսի հիվանդանոցում ուրախությամբ հիշում են, որ ընդունել են անգամ Ղազախստանից, Ռուսաստանից, Պարսկաստանից, Իտալիայից, Հոլանդիայից ու Ֆրանսիայից ժամանած օտարերկրացիների ծննդաբերություններ: «Գորիս» բժշկական կենտրոնի տնօրեն **Սլավիկ Ամիրյանը** նշում է, որ վերջին երեք տարիների ընթացքում իրենց հիվանդանոցում ծննդաբերել է 17 օտարերկրացի:

Ծննդօգնության հավաստագրերի տեղայնացման մասին առողջապահության նախարարի հրամանը Գորիսի հիվանդանոցի վրա շատ չի ազդել, քանի որ, ըստ տնօրենի, ունեն և՛ բավարար պայմաններ, և՛ մասնագիտական բավարար ներուժ, իհարկե լինում են դեպքեր, երբ հարկ է լինում մարզից ուղեգրել Երեւանի 3-րդ մակարդակի հիվանդանոց, բայց, ընդհանուր առմամբ, մայիսի մեկից սկսված տեղայնացման գործընթացը Գորիսում ընդունվող ծնունդների թվի վրա չի ազդել: Իսկ տարեկան կտրվածքով՝ այստեղ ընդունում են 580 ծնունդ:



Մայրը նորածնի հետ Գորիսում

Գորիս քաղաքի բուժկենտրոնը, որը համարվում է 2-րդ Բ մակարդակի, վերանորոգվել է Համաշխարհային բանկի վարկային ծրագրով եւ արդեն վերանորոգված վիճակում բացվել 2010-ին:

Ծննդօգնության հավաստագրի տեղայնացման թեմային, նաեւ բացառություններին, թե ե՞րբ կարող է ծննդկանը պետպատվերով ծննդաբերել իր բնակավայրից հեռու, ասենք, մարզից տեղափոխվել Երեւան, հուլիսի 19-ի ու 20-ի համարներում նույնպես անդրադարձել ենք: Իսկ Գորիսի եւ մարզային եւս երեք հիվանդանոցներ այցելությունը նախաձեռնել էր ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը: Հիշեցնենք, որ ծննդօգնության հավաստագրի տեղայնացման որոշումը հղի կանանց հնարավորություն է տալիս պետպատվերով ծննդաբերելու միայն իրենց բնակավայրերի հիվանդանոցներում, բայց ոչ բնակավայրերից դուրս՝ չհաշված որոշ բացառությունները:

Առողջապահության նախարարության մայրական եւ վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ **Գայանե Ավագյանն** արդարացնում է որոշումը՝ ասելով. «Մենք փորձում ենք ֆինանսական հոսքերն ուղղել տեղի բուժհիմնարկներ, որպեսզի զարգանան ծննդօգնության նաեւ մարզային հիմնարկները: Արտաշատի կանայք, եթե անընդհատ գան ծննդաբերելու Երեւանում, ապա քիչ կլինի Արտաշատում ընդունվող ծննդաբերությունների թիվը, հետեւաբար կփոքրանա Արտաշատի հիվանդանոցի բյուջեն: Իսկ եթե փոքրացավ բյուջեն, ապա չեն կարող արժանավայել աշխատավարձ տալ բուժաշխատողներին, որոնք արդեն կտեղափոխվեն այլ հիվանդանոցներ»:

Նախարարության ներկայացուցիչն ասում է, որ մարզային հիվանդանոցներին տալիս են այնքան գումար, որով հազիվ կարողանում են փակել կոմունալ ծախսերը, վճարել աշխատավարձերն ու գնել դեղորայք, իսկ դրանից հետո այլեւս գումար չեն ունենում, որ սարքավորում ու գույք գնեն. «Ես փորձում եմ հասկանալ, թե ինչո՞ւ են հին ու անորակ Արտաշատի հիվանդանոցի մահճակալները: Պատճառն այն է, որ բյուջեում դրա համար գումար չկա»: (Արտաշատի հիվանդանոցի մասին կարող եք կարդալ «**Ազգի**» ամսի 19-ի համարում):

Գայանե Ավագյանը մեջբերում է վիճակագրությունից. անցյալ տարի Հայաստանում ծննդաբերությունների 50 տոկոսը եղել է Երեւանում, մյուս 50 տոկոսը՝ մարզերում, եւ Երեւանում ծննդաբերած կանանց 1/3-ը, որոնք եկել են մարզերից, մեծամասամբ եկել են առանց հիմնավորման:

Ի տարբերություն նախարարության ներկայացուցչի՝ ԱԺ պատգամավոր **Թեւան Պողոսյանը**, դեմ է նախարարի հրամանին, եւ գտնում է՝ որեւէ խնդիր լուծելու համար այս որոշումն արհեստական մեխանիզմ է. «Պետությունը պետք է կարողանա ստեղծել հիվանդանոցային լավ պայմաններ բոլոր քաղաքներում եւ ստեղծել մի իրավիճակ, որի մեջ հիվանդանոցները կմրցեն իրար հետ»: Պատգամավորը կողմ է, որ յուրաքանչյուր կին ինքն ընտրի, թե ո՞ր հիվանդանոցում է ուզում անվճար հավաստագրով ծննդաբերել. պետք է ազատություն լինի: Տեղայնացման որոշումը, ըստ նրա, չի նպաստելու մարզային հիվանդանոցների զարգացմանը, իսկ պետության միջամտությամբ արհեստականորեն կպահվեն հիմնարկներ, որոնք ի սկզբանե գիտենք, որ չեն կարողանալու զարգանալ. «Եվ որոշումը սահմանափակում է այն մարդկանց համար, ովքեր գումար չունեն, քանի որ գումար ունեցողը, այսպես թե այնպես, ծննդաբերելու է ավելի լավ հիվանդանոցում»: Պարոն Պողոսյանը մտավախություն ունի, որ կանայք բարձրորակ ծննդօգնություն չստանալուց հետո միգուցե՞ չուզենան ունենալ 2-րդ, 3-րդ կամ 4-րդ երեխային: Որպես պատգամավոր Թեւան Պողոսյանը բարձրացնելու է տեղայնացման որոշման՝ իրականությանը չհամապատասխանելու հարցը:

Որոշումից ընդամենը անցել է 2,5 ամիս, ինչը դեռ բավարար չէ տեսնելու համար տեղայնացման դրական ու բացասական հետեւանքները, իսկ առայժմ փաստերը ցույց են տալիս՝ Երեւան եկող հղիների թիվը նվազում է:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## Ցաւակցագիր

Հալէպի Ռամկավար ազատական կուսակցութեան ու Թէքէեան մշակութային միութեան ողջ շրջանակը սրտի դառն կսկիծով իմացաւ իր գաղափարի վաստակաւոր, հաւատաւոր եւ նուիրեալ ընկերներէն **Արա Ճիւանեանի** շիջման գոյժը:

Հանգուցեալը երկար տարիներու իր բազմաշնորհ վաստակով, անսակարկ աշխատանքով, գաղափարական անշահախնդիր յատկանիշներով անջնջելի հետք ձգեց իր շրջանակէն, ինչպէս նաեւ դամասկահայ գաղութէն ներս:

Մեր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին տիկնոջ, զաւակներուն ու թոռներուն, ինչպէս նաեւ կը ցաւակցինք Դամասկոսի ՌԱԿ-ի եւ ԹՄՄ-ի բոլոր մեր ընկեր ընկերուհիներուն, թանկագին ընկերոջ՝ Արա Ճիւանեանի դառնաղէտ ու կսկծալի մահուան առթիւ:

Յարգանք իր վաստակին ու անշահախնդիր նուիրումին:

Ի Դիմաց՝

ՌԱԿ Հալէպի շրջանակի
Շրջանային վարչութեան

| ատենապետ | ատենադպիր |
|---|---|
| Բժ. Ժոզեֆ Օհաննեան | Լեւոն Պըլըգեան |

ԳԾԱՏԵՐԵՐԻ ԽԱՃԱԿՈՎ

# Հեշտ փողերը պտտեցրել են...

1-ին էջից

**Մինչդեռ քաղաքացիական ակտիվիստները շատ անգամ էմոցիայի մակարդակով են հակադրվում այդ որոշմանը: Առայժմ նկատելի է ինչ-որ «Հայազն» կուսակցության հայտարարություն, որը թանկացումը դատապարտելու հետ մի շարք առաջարկներ եւ պայքարի գործողություններ է անում: ՀԴԿ-ի հայտարարությունն է դատապարտում տրանսպորտի թանկացման որոշումը՝ այն անհիմն, կամայական եւ ուռճացված, ու իշխանության հովանավորությունից օգտվող գծատերերի գերշահույթի հերթական բաժինն ապահովող անվանելով:**

**Առաջ որեւէ բան հազիվ տեղի ունեցած՝ «Ժառանգությունն» էր արձագանքում արտակարգ ռեժիմով, այժմ հավանաբար հոգնած է, նույն էնտուզիազմով չի արձագանքում: Իսկ երեկվա այն լուրը, որ Երեւանու ավագանու անդամ ԲՀԿ-ն եւ «Բարեւ, Երեւան»-ը տոտորագրահավաքով ավագանու արտահերթ նիստ են պահանջելու՝ առավել մասնավոր մոտեցում է, որովհետեւ տրանսպորտի թանկացումը շատ ավելի գլոբալ խնդիր է դառնում, քան ավագանու խնդիրն է, մանավանդ՝ ավագանու մեծ մասը ապահովված մարդիկ են եւ հիմա երեւի դուբայներում կամ կիպրոսներում հանգստանում են:**

**Ու տացվում է, որ ամենուժեղ կուսակցությունը հիմա «Սոցիոմետրի» Ահարոն Ադիբեկյանն է՝ մեն-մենակ, ով էլ ուղղորդում է, թե խնդիրը ոչ թե տրանսպորտի բարձր գինն է, այլ՝ ցածր աշխատավարձը, եւ տրանսպորտից օգտվում է ցածր՝ 60 հազար դրամ աշխատավարձ ստացողը, ոչ թե 300 հազար դրամ ստացողը, ով մեքենա ունի: Իսկ 60 հազար դրամ ստացողի համար տրանսպորտի թանկացումն էական փոփոխություն է:**

**Ադիբեկյանի վիճակագրությամբ (դա պաշտոնական վիճակագրությունն է)՝ Երեւանի բնակչության, իսկ ավելի շուտ՝ ուղեւորների 45%-ը միկրոավտոբուսով է երթեւեկում, սեփական ավտոմեքենաներով՝ 12%-ը, տաքսի է նստում 12,5%-ը, 20%-ը նստում է քաղաքային ավտոբուս, 8%-ը մետրոյից է օգտվում, 2%-ը՝ տրոլեյբուսից, իսկ 1 %-ը ծառայողական մեքենաներով է երթեւեկում:**

**Հետեւաբար 65 տոկոսը զգալու է այդ թանկացումը: Ըստ քաղաքապետարանի՝ Երեւանում տարեկան 207 մլն ուղեւոր երթեւեկում է թանկացած փոխադրամիջոցով: Այս թիվը հակասում է նրան, որ ամեն օր մոտ կես միլիոն մարդ տեղաշարժվում է Երեւանում, եւ դրանց ահռելի մասը սովորական ուղեւոր է: Իրականում հավանաբար տրանսպորտի նոր սակագինն արդյունք է նրա, որ գծի տերերին տրվող ամսական ստվերային ահռելի գումարը ինչ- որ խրթին հաշվարկներում տեղավորելով՝ ստացել են 150 դրամ սակագինը, մինչդեռ հարկերի եւ այլնի տեսքով այդ գծի համար փողը ոչ մի տեղ չի արտացոլվում: Ադիբեկյանը երեւի մեր տրանսպորտայիններից ավելի արդյունավետ է աշխատեցնում ուղեղը՝ ցերեկը 100, երեկոյան՝ 150 եւ գիշերը՝ 200 դրամանոց ճկուն սակագին առաջարկելով:**

**Մինչդեռ շատերն այս քանի օրը տրանսպորտի թանկացումն անհամաչափ են համարում մյուս թանկացումներին՝ 50 տոկոսանոց թանկացում այլ ոլորտներում չկա:**

**Զգիտենք՝ ի վերջո որքա՞ն է ուռճացված տրանսպորտի սակագնի թանկացման պաշտոնական հիմնավորումը, սակայն ակնհայտ է, որ այստեղ կարիք կա փորձագիտական այլընտրանքային գնահատականների, որոնք նախ սպասում էինք կուսակցությունների շարքերը համալրած տնտեսագետներից: Ակնհայտ է, որ բողոքի գործողություն կազմակերպելուց առաջ պետք է սակագնի վերաբերյալ այլընտրանքային ու հավաս ներշնչող հաշվարկ լինի, եւ դա ումի՞ց պետք է սպասել, եթե ոչ մեր քաղաքական կուսակցությունների տնտեսական թեւերից: Այս դեպքում միայն կկարողանանք որոշել, թե նոր սակագինը որքանո՞վ է առանձին գծատերերի՝ գերշահույթ ստանալու չզսպված ախորժակի արդյունք, կամ գազի սակագնի թանկացումը քանի՞ տոկոս թանկացման է բերել տրանսպորտի առումով:**

**Սա մի թեմա է, որ կարող է տաքանալ եւ հասարակությանը ներքաշել իր պտույտի մեջ, իսկ մասնագիտական գնահատականների կարիքը կա, քանի որ հիմա հաճախ է լսվում. եթե Երեւան քաղաքում գոնե հնարավոր չէ զսպել գծատերերի ախորժակը, ապա հարկ է, որ ուղեւորափոխադրումը վերցվի մասնավորից եւ գոնե Երեւանում վերտսին տրվի Երեւանի քաղաքապետարանին՝ և՛ շահույթը կմնա պետությանը, եւ միգուցե տրանսպորտային սպասարկումը կարգավորվի: Մենք, իհարկե, չենք խորանում այսպիսի հղնթացս առաջարկների տնտեսական հիմնավորվածության կամ պոպուլիզմի մեջ, սակայն ակնհայտ է մի բան՝ կոնկրետ Երեւանում ուղեւորափոխադրումների ոլորտում մեծ փողեր են պտտվում, որոնք, երեւում է, պտտեցնում են հեշտ շահույթ ստանալ ցանկացողների գլուխները: Ոչ մի ուրիշ ոլորտի շահույթ չի կարող համեմատվել ամեն օր շուրջ կես միլիոն ուղեւորի վճարած 100, հիմա էլ 150 դրամի ապահոված ամենօրյա շահույթի հետ: Ուրեմն՝ ամեն օր, կոպիտ հաշվարկներով, միայն Երեւանում 50 մլն դրամ կամ մոտ 250 հազար դոլար փող էր պտտվում նվազագույնը, կրկնենք՝ նվազագույնը 100 դրամ սակագնով: Բա հիմա դա ավելանում ու դառնում է 400 հազար դոլար, նկատեցի՞ք նոր շահույթի ահագնությունը, կամ տարվա կտրվածքով եթե դիտարկեք, թե ի՞նչ գումարի մասին կարող է խոսք լինել, որից մաքուր շահույթն, ի դեպ, չէր խանգարի, որ հոսեր ոչ թե մասնավորի գրպանը, այլ՝ պետության:**

**Ընդ որում՝ երեկ արդեն 150 դրամ վճարելով՝ ոչ սպասարկման նոր որակ նկատեցինք, ոչ միայն նստած մարդկանցով երթեւեկող երթուղայիններ տեսանք, ոչ էլ երեկոյան մի առանձնապես ժամանակին եկող փոխադրամիջոց:**

Հ.Գ.-Երբ մեր հրապարակումը պատրաստ էր, հանրային տրանսպորտի սակագինը 50 տոկոսով բարձրացնելու որոշման չհիմնավորված լինելու վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ ՀՅԴ-ն՝ քաղաքական, սոցիալական եւ իրավական տեսանկյունից այդ քայլն անընդունելի համարելով եւ պահանջելով կասեցնել որոշումը եւ առաջարկելով մասնագիտական խումբ ձեւավորել՝ ոլորտում միասնական-իրավական համակարգ ստեղծելու համար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

# Երեւանում՝ ինչպես Ռիո դը Ժանեյրո՞ում




Այն, ինչ կատարվեց Ռիո դը Ժանեյրո եւ Սան Պաուլո քաղաքներում վերջին 3 շաբաթների ընթացքում, դարձավ ոչ միայն Լատինական Ամերիկայում, այլեւ ամբողջ աշխարհում քննարկման թեմա: Ըստ Euronews-ի՝ 220.000 մարդ շաբաթներ շարունակ երկրի երկու խոշորագույն քաղաքների փողոցներից տուն չէին վերադառնում, գիշերում էին հրապարակներում, անկարգություններ կազմակերպում՝ պահանջելով չբարձրացնել երթուղային ավտոբուսների եւ մետրոյի սակագները: Բրազիլական իշխանությունները երկար չկարողացան դիմակայել հասարակական ճնշմանն ու նախորդ շաբաթ հայտարարեցին, որ երկու տրանսպորտներն էլ չեն թանկանալու:




Ընդունված է ասել, որ Հայաստանում սոցիալական հարցերով բողոքի ակցիաներ չեն լինում, թանկացումը ժողովուրդն ընդունում է գլուխը կախ ու «դե մի կերպ յոլա կգնանք»-ի տրամաբանությամբ շարունակում գոյատեւել: Սակայն նախորդ շաբաթ Երեւանում միջքաղաքային տրանսպորտի սակագինը 50 տոկոսով բարձրացնելու լուրը որոշակի ցնցումներ առաջացրեց հասարակության մեջ, ու ընդդեմ թանկացումներին տրամադրությամբ Երեւանը կամաց-կամաց նմանվում է Ռիոյին, առայժմ խաղաղ ու հանգիստ ակցիաներով, առանց զոհերի կամ տուժածների:

Որ տրանսպորտի իրավիճակը սարսափելի է եւ փոփոխություններ են անհրաժեշտ՝ անհերքելի փաստ է: Դրա մասին մեր թերթում մի քանի անգամ գրվել է եւ ամեն անգամ ընդգծվել, որ անհնար է փոփոխություններ կատարել առանց սակագնի բարձրացման:

Անհնար է առաջխաղացում առանց գնաճի, սակայն ինֆլյացիային զուգահեռ՝ պետք է աշխատավարձերն ու կենսաթոշակներն էլ բարձրացնել, որպեսզի սոցիալական ճեղքեր չառաջանան: Վերջին 2 ամսվա ընթացքում սա հինգերորդ թանկացումն է. արդեն թանկացել են գազը, էլեկտրաէներգիան, հացն ու կաթնամթերքը, ուրբաթ օրվանից տրանսպորտը նախկին 100-ի փոխարեն դարձավ 150 դրամ: Որոշ մասնագետներ պնդում են, որ սա հարկադրված քայլ է, եւ ներկայացնում են իրենց վերլուծությունները, որոշ մասնագետներ էլ հակառակ տեսակետն են պնդում՝ կրկին վերլուծություններով եւ հաշվետվությամբ:

Քաղաքապետարանից հավաստիացնում են, որ ուղեվարձի թանկացումից սկսած իրենք նաեւ մոնիտորինգ են կատարում եւ համոզվել են, որ երթուղային տաքսիների վարորդները ավելի մարդ չեն վերցնում եւ նաեւ կանգառներում հերթեր չեն գոյանում: Ես էլ եմ երթուղային տաքսիով երթեւեկում: Երեկ էլ, 68 համարի երթուղայինում ուղեւորները բերնեբերան լցված էին, գործարանային նստատեղերը կիսաքանդ էին, վարորդն էլի ծխում էր: Ստացվում է, նախ էքստրեմալ պայմաններում պետք է երթեւեկենք ու նաեւ 50 տոկոսով բարձրանա վճա՞րը: Քաղաքապետարանի խոստումներին, որ շուտով ամեն ինչ կկարգավորվի, ցավոք, քչերն են հավատում:

Տրանսպորտի թանկացումը կարծես համբերության վերջին կաթիլն էր, եւ կարծես թե հասարակական աղմուկն ավելի մեծանում է:

Կիրակի օրվանից բազմաթիվ հայտնի դեմքեր, դերասաններ ու քաղաքական գործիչներ նախաձեռնել են free car ակցիան՝ մեքենայով մարդկանց անվճար հասցնում են տուն կամ աշխատավայր՝ հորդորելով մարդկանց չվճարել 150 դրամ: Նախաձեռնությունը դերասան Հայկ Մարությանինն էր, ում միացան եւ դեռ միանում են շատերը:

Կամավորները քաղաքում շրջում եւ բաժանում են բուկլետներ՝ քաղաքացիներին կոչ անելով չվճարել 150 դրամ, համընդհանուր բողոքել ու պահանջել, որ տրանսպորտի սակագինն էժանանա:

Այս ամենին նախ լուռ անտարբերությամբ, հետո արդեն հայտարարությամբ պատասխանեց քաղաքապետարանը. քաղաքում տեղի ունեցողը շոու է: Սա քաղաքապետարանի գնահատականն է:

Շոու է, թե ոչ, դժվար է ասել, հատկապես երբ քաղաքապետարանի աշխատակիցներից ոմանք հայտարարում են, թե 50 դրամն ի՞նչ փող է, որ կռիվ եք անում, ու նմանատիպ սարկազմով լի արտահայտություններ: Դա, իհարկե, այդ անձանց իրավունքն է, սակայն փաստն այն է, որ հասարակության մեջ Դժգոհությունը հասել է գագաթնակետին եւ դա չտեսնելն ուղղակի անհնար է:

Անշուշտ, այս բողոքի ակցիան պետք է ոչ միայն սթափեցնող լինի, այլեւ արդյունավետ: Բնականաբար, ոչ ոք չի կարող երկար ժամանակ իր մեքենայով մարդկանց անվճար տեղափոխել, կամ 150-ի փոխարեն վճարել 100 դրամ: Պահանջը պետք է լինի կառավարությանը՝ բարձրացնել աշխատավարձը գոնե 50 տոկոսով. ի վերջո այսքան թանկացումների ֆոնին անհնար է անգամ գոյատեւել ստանալիք աշխատավարձով: Նաեւ կոնկրետ երաշխիքներ եւ ժամկետներ պահանջել, թե երբ կազատվենք «հոտավետ» ավտոներից, անբարեկիրթ վարորդներից ու ժամերով կանգառում երթուղայինի սպասելու արդեն ավանդական իրավիճակից:

Ի դեպ, երեկ մի շարք վարորդներ հաստատել են, որ սակագնի բարձրացմանը զուգահեռ իրենց աշխատավարձը չի բարձրացել. մոտ ապագայում էլ վարորդները նման ակնկալիքներ կարծես թե չունեն:

Մինչ քաղաքապետարանում լռում են, մինչ տրանսպորտի վարչության պետը գոռում է, եւ մինչ քաղաքացիներն առայժմ բողոքի ակցիաներ են անցկացնում, համացանցում պտտվում է մի տեսահոլովակ, երբ այս տարվա մարտի վերջերին, ավագանու ընտրություններից առաջ քաղաքապետարանի լրատվական բաժնի պատրաստած տեսանյութում Տարոն Մարգարյանը «պաշտոնապես հայտարարում է, որ առաջիկայում թանկացումներ չեն լինելու»: Հաշվի առնելով վերջին օրերի զարգացումները՝ քաղաքապետի այդ հավաստիացումը նախընտրական բլե՞ֆ էր ուրեմն:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ուր են «Երեւան սիթի»-ի ՀԴՄ կտրոնները

**«Երեւան սիթի» սուպերմարկետների ցանցի խանութներից մեկում վերջերս մի հետաքրքրական երեւույթ կարելի է նկատել. հսկիչ-դրամարկղային կտրոն որեւէ դրամարկղ չի տրամադրում, հետն էլ տեղեկացնում է, թե այն, ինչ ՀԴՄ է կոչվում, կլինի միայն օգոստոսի 1-ից: Դրա փոխարեն մեկ էլ երեկ մի վաճառողուհի դժվար ընկալելի մի նախադասություն էր փորձում բարձրաձայնել, թե ինչ-որ բան է լինելու, դրա համար էլ այդ ոչ ՀԴՄ կտրոններն են տրամադրվում:**

**Կտրոններ չտրամադրողների դեմ երբեք պահանջ ներկայացնողներից չեմ, ոչ էլ մեկը, որ հատկապես փոքր մի խանութում, այն էլ այս շոգին, կսպասի, մինչեւ ակնհայտ չկամությամբ մեկը ՀԴՄ կտա: Սակայն երբ նման կերպ վարվում է բազմազավակ ընտանիքի հայրը, որի կարողությունը բոլորն ընդհանուր գծերով պատկերացնում են, սակայն ինքը կնոջից է միայն այդ մասին տեղեկանում, առնվազն զավեշտալի է:**

**Զավեշտալի է, քանի որ հայտնի սուպերմարկետների ցանցը աղքատներից չէ, ոչ էլ կարծես ֆինանսական խնդիրներ ունի, սակայն աշխարհի ու ամենից առաջ հայրենի կառավարության աչքի առաջ հաշվի չի առնում տարրական պահանջները, որոնք չպահպանելու համար գլխավոր բակերից մեկի մի փոքր խանութ տարին մի 5-6 անգամ փակում ու բացում են:**

**Մինչդեռ երբ ՀԴՄ չի տրամադրում պատգամավորին պատկանող հսկայական ցանցի մի խանութ, դրա մասին կարծես անտեղյակ են:**



**Այս իրողությունը եթե հանցագործություն չէ ու պատժելի չէ, ապա առնվազն կրկնակի զավեշտալի է այն համատեքստում, ինչ այսօր գրեթե բոլորի առօրյան է. մարդիկ տարբեր միջոցներով, տարբեր հարթակներում, տարբեր մոտեցմամբ, բայց փորձում են իրենց բողոքն արտահայտել հասարակական տրանսպորտի թանկացման առնչությամբ: Այստեղ զավեշտը համընկնում է ողբերգության հետ այն համատեքստում, որ այդ նույն օրերին միլիոնների շրջանառություն ունեցող սուպերմարկետում ՀԴՄ չեն տրամադրում, հետեւաբար նաեւ օրինական հիմք են տալիս կասկածելու, որ ամեն ինչ չէ, որ արվում է ըստ օրենքի:**

**Զավեշտալիության մի մասն էլ այն հանգամանքն է, որ դժգոհող կամ, քաղաքակիրթ ձեւակերպմամբ, սեփական իրավունքները պաշտպանելու փորձ անող գնորդներին էլ սուպերմարկետների հազվադեպ ժպտացող վաճառողուհիները, արդեն իսկ բողոքող անձին միայն, տեղեկացնում են, թե ինչ-որ վիճակահանություն թե մրցանակաբաշխություն, թե նման մի բան է լինելու այդ ոչ ՀԴՄ-ական կտրոններով:**

**Կրկին օրինական մի հարց է ծագում, թե ինչ-որ խաղարկություն կամ էլ նման մեկ այլ կարգի հորինվածքով ՀԴՄ կտրոնների բացակայությունը պատճառաբանող սուպերմարկետների ցանցի ղեկավարներն ինչու են ինքնագլուխ, եւ որ կարեւոր է, օրենքի խախտմամբ, նման միջոցառում կազմակերպում, եթե ընդհանրապես նման մի բան կազմակերպվում է, քանի որ վաճառողուհիները ոչ միայն չեն ժպտում, այլեւ որեւէ բան կրկնելու խնդրանքին դրական արձագանքելու անընդունակ են:**

**Այս ամենից կարելի է եզրակացություն անել եւ, ցավոք, միայն մեկը. Հայաստանում դեռ այնպիսի օրենքներ են գործում, որոնց միջոցով կիսատ-պռատ աշխատող հասարակական տրանսպորտի համար 100-ի փոխարեն 150 դրամ են պահանջում, մինչդեռ միլիոնների շրջանառությունը ուղղակի, բացեիբաց, օրը ցերեկով մտել է ստվեր՝ միլիոնները միլիարդների եւ տրիլիոնների մոտեցնելու հաստատ մեծ ախորժակով:**

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՌԵՊԼԻԿ

# Երբ արձակուրդ է մեկնում ՀՀ նախագահը

**Հայաստանն, իհարկե, Ֆրանսիա չէ, անգամ Լեհաստանից ենք բավական հեռու, հետեւաբար, երբ Հայաստանում արձակուրդի է մեկնում հանրապետության նախագահը, նշանակում է՝ առնվազն մինչ նախագահի վերադարձը երկրում ոչինչ կարեւոր չի կատարվելու:**

**Ֆրանսիայում ու Լեհաստանում, օրինակ, այդպես չէ, որովհետեւ Ֆրանսիայում ու Լեհաստանում աշխատում է ոչ միայն նախագահը միայն, այլեւ՝ նախագահը նաեւ: Ի զարմանս Հայաստանի շատ ու շատ պաշտոնյաների՝ Ֆրանսիայում աշխատում են քաղաքապետները, անգամ քաղաքապետարանների այս կամ այն վարչությունների պետերն ու դրանց աշխատակիցները, պատկերացնո՞ւմ եք: Ֆրանսիայում ու Լեհաստանում, օրինակ, մանր ու միջին պաշտոնյաները կարող են հարց լուծել: Ասենք, Լյուքսեմբուրգին սահմանակից Տյոնվիլ փոքրիկ քաղաքի քաղաքապետը, ճիշտ է, չի կարող որոշել Ֆրանսիայի, եւ, օրինակ, Ուկրաինայի հարաբերությունները, կամ չի կարող որոշել, թե ԵՄ-ն որքան վարկ պետք է փոխանցի Հունաստանին կամ Պորտուգալիային, բայց կարող է հողակտոր հատկացնել ինչ-որ քաղաքացու, ով ցանկանում է տուն կառուցել կամ հասարակությանը պիտանի օբյեկտ բացել: Միեւնույն ժամանակ, Տյոնվիլի քաղաքապետը կարող է հասնել նրան, որ հասարակությանը ոչ պիտանի գործով զբաղվող սեփականատերը զրկվի իր սեփականությունից, մանավանդ երբ առկա է նույն այդ հասարակության բացահայտ դժգոհությունը տվյալ սեփականատիրոջից ու վերջինիս գործունեությունից: Այսինքն՝ Ֆրանսիայում քաղաքապետն զբաղվում է իր աշխատանքով, վարչապետն՝ իր, նախարարն՝ իր, նախագահն՝ իր, եւ, որն ամենակարեւորն է, քաղաքապետարանի այս կամ այն վարչության պետն ու աշխատակիցը՝ իրենց:**

**Բայց թողնենք Ֆրանսիան ու Լեհաստանը, մանավանդ որ Հայաստանը երկուսից էլ հեռու է, չնայած ԵՄ-ի «Արեւելյան գործընկերության» անդամներից է: Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ մեկնեց արձակուրդ, սա Սերժ Սարգսյանի երկրորդ արձակուրդն է՝ շատ կարճ ժամանակահատվածում. նախագահի անցյալ արձակուրդը հունիսի 12-20-ն էր, ընդ որում, այս անգամ էլ նախագահն իր արձակուրդը կանցկացնի ոչ թե «տարածաշրջանային տուրիստական կենտրոն Հայաստանում», այլ՝ արտասահմանում:**

**Նախագահի հանգստի մեկնելը նշանակում է ոչ միայն այն, որ Սերժ Սարգսյանը կարճ ժամանակահատվածում երկու անգամ մեկնեց արձակուրդ, այլ, որ մինչ նախագահի վերադառնալը մեր երկրում ոչ մի բան չի կատարվելու, որովհետեւ ոչ ոք չի աշխատելու, որովհետեւ ոչ ոք չի աշխատում:**

**Նախագահի հետ արձակուրդի է մեկնել նաեւ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ի դեպ: Հետեւաբար՝ ԱԺ նախագահը հաստատ չի աշխատելու այս ընթացքում:**

**Հայաստանն, իհարկե, Ֆրանսիա չէ, կամ էլ Լեհաստան, որովհետեւ եթե, օրինակ, Փարիզի ու Վարշավայի քաղաքային տրանսպորտի սակագինը բարձրանար, թեկուզ հիսուն տոկոսով, ոչ մի փարիզցի կամ վարշավացի չէր պահանջի, որ «նախագահը խոսի»: Պարզապես այդ երկրներում, եւ ոչ միայն այդ երկրներում, նախագահից բացի էլի շատ աշխատողներ կան, եւ քաղաքացիները գիտեն այդ մասին ու պահանջում են, որ խոսի նա, ով ի պաշտոնե պետք է խոսի, եւ, ով զարմանք, նա խոսում է, բացատրություն է տալիս, պարզաբանում է, նա գիտի, որ ինքը պարտավոր է, պատկերացնո՞ւմ եք:**

**Բայց մեր երկրում նախագահը մեկնել է արձակուրդ, հետեւաբար մինչ նրա վերադարձը ոչինչ էլ չի կատարվի:**

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Դիտարկում եւ տեսակէտ

# Հայաստանեայց առաքելական եկեղեցին եւ համայնքները բեմ են փսիքոտռամներու (Psychodrames)

Մտածումներս, օրին, խմբած էի հատորի մը մէջ՝ «ԵԿԵՂԵՑԻՆ, ՀՕՏԸ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ» խորագրով: Նոր տագնապներ կը մղեն զիս կրկին արտայայտուելու: Միշտ հաւատացած եմ Հայաստանեայց եկեղեցիի պատմական եւ ազգաշէն առաքելութեան, երէկ, նաեւ՝ այսօր: Այդ առաքելութեան հաւատացած է եւ կը հաւատայ ժողովուրդը, որ ԷԿԼԵԶԻԱ-ն է, ան է ԵԿԵՂԵՑԻՆ, բառին ստուգաբանական իմաստով:

Մեր ժողովուրդի պարագային, եկեղեցին ընդելուզուած է մեր կեանքին: Աշխարհի մէջ խօսուած ժողովրդավարական ճառերէն շատ առաջ, հայ հաւատացեալները տէր եղած են իրենց եկեղեցիին, կառուցած են զանոնք, բայց մասնակցած են, երբ հիմնական ընտրութիւններու առջեւ կանգնած է ան: Այլ խօսքով, ԷԿԼԵԶԻԱ-ն, ժողովուրդը, աշխարհականներ ներկայ եղած են հաւատքի եւ հաւատամքի ընտրանքներու որոշման կայացման: Պատմութիւնը լաւ ուսուցիչ է:

Յաճախ կը մոռնանք, որ Հայաստանեայց եկեղեցին ԿՂԵՐԱՊԵՏԱԿԱՆ չէ: Այս յիշեցումը եւ ըմբռնումը կարեւոր է, ընկերութիւններու հոլովոյթին եւ ազատութիւններու տիեզերական զարգացման ընթացքին մէջ: Եկեղեցականները, քահանայէն մինչեւ կաթողիկոս, պաշտօնի կը կոչուին ժողովներու կողմէ, ուր աշխարհականները մեծամասնութիւն կը կազմեն, կը նշանակէ որ անոնք իրենց գործունէութեան համար հաշուետու են ժողովուրդին կողմէ ընտրուած պատգամաւորներու առջեւ: Այսինքն, եկեղեցականը տէրը չէ եկեղեցիին, ունենալով հանդերձ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ: Այլ խօսքով, եկեղեցիի աշխարհիկ մարզը կը ղեկավարուի (կամ պէտք է ղեկավարուի) աշխարհականներով, որոնք կը կազմեն ԵԿԵՂԵՑԻՆ, եւ հոգեւորականները կը սպասարկեն: Այս ձեւով կը կազմուի Հայ առաքելական եկեղեցիի համայնքը:

(Կաթողիկէ եկեղեցին կղերապետական է, այսինքն կղերն է տէրը հոգեւոր եւ աշխարհիկ մարզերուն միաժամանակ:)

Դժբախտաբար, դարերու ընթացքին, նոյն այդ մեր ԷԿԼԵԶԻԱն ենթարկուած է ցնցումներու: Ան յաճախ զիջած է կրօնականներու եւ աշխարհական ջոջերու փառասիրութեան առջեւ, վերածուած է «ընտրանի»ի շրջանակի: Ամէնէն յատկանշական օրինակը հետեւեալն է. Ազգային եկեղեցական ընդհանուր ժողովին համար համայնքը, օրինակ Ֆրանսայի համայնքը, 25.000 հոգիի դիմաց կընտրէ մէկ պատգամաւոր: Ոչ մէկ տեղ այդ 25.000-ը չէ հրաւիրուած ընտրելու զինք ներկայացնող պատգամաւորը: Ոչ ոք իրապէս ցանկացած է այս անհեթեթ կացութիւնը սրբագրել:

Անշուշտ պատասխանատու է նոյն այդ ԷԿԼԵԶԻԱ-ն, ժողովուրդը, որ աստիճանաբար հեռացած է իր եկեղեցիէն, բախտաւոր պարագային անկէ ակնկալելով ծիսական բաժինը միայն՝ մկրտութիւն, ամուսնութիւն եւ թաղում: Պէտք է խօսիլ նաեւ քաղաքական-գաղափարաբանական ազդեցութիւններու մասին, անոնք քանդիչ բնոյթ ունեցած են եւ ունին, օրինակ, երբ ղեկավարութիւն խաղցող անձը ամբարտաւանութեամբ կը յայտարարէ, թէ «ի՞նչ գործ ունինք եկեղեցիին հետ», ֆրանսերէնով աւելի արհամարհական է խօսքը (quest-ce quon foutre de le´glise), կամ երբ եկեղեցին գործածուած է որպէս քաղաքական-քարոզչական միջոց, միաժամանակ յայտարարելով «անաստուածութիւն» եւ այդ ուսուցանելով սովետներու երկրին մէջ: Համակարգ՝ որմէ եօթանասուն տարուան տիրապետութենէ ետք դուրս եկաւ Հայաստանը:

Հայաստանի վերանկախացումէն ետք երկրին եւ սփիւռքներու մէջ նոր կացութիւն ստեղծուած է:

Յոռեգոյն խուլերը անոնք են, որոնք չեն ուզեր լսել:

Յիշեցում մը:

1989-ին, Հայաստան դեռ խորհրդային էր, Գերագոյն Խորհուրդի նախագահի հանգամանքով Փարիզ կը գտնուէր Լեւոն Տէր Պետրոսեան, որ խիստ նշանակալից եւ ուշագրաւ յայտարարութիւն մը ըրաւ բեմէն, ըսելով՝ որ վաղը սփիւռքի մէջ մենք կը նշանակենք մեր ներկայացուցիչները եւ անոնց միջոցով կը կառավարենք սփիւռքը... Եթէ տարրական առարկայական վերաբերումը ունինք ներկայ կացութեան նկատմամբ, պիտի նկատենք, որ ազգային-համայնքային-միութենական-կուսակցական-եկեղեցական բոլոր մարզերուն մէջ, Լեւոն Տէր Պետրոսեանի ուղեգիծը կը գործադրուի, մեր անտարբերութեամբ եւ կամ մեղսակցութեամբ: Գովասանքի եւ շքանշաններու ծարաւ ունեցող մեծեր ու պզտիկներ քայլ կը պահեն, եւ սփիւռքը աստիճանաբար փուլ կու գայ, կը դառնայ անինքնութիւն հաւաքականութիւն մը, որուն համար սահմանուած գործունէութիւնը միայն նիւթական մատակարարումն է, եւ այդ ընելու համար մարդիկ եւ միութիւններ կը մրցին եւ ըստ այնմ... կարժեւորուին: Ծանօթ է իրողութիւնը:

Այլ խօսքով, հայրենահանուածներու հայկական բռնագրաւուած հայրենիքի իրաւատէր սփիւռքի հայկական նկարագրով պահպանումը աստիճանաբար կը դադրի մտահոգութիւն ըլլալէ: Այդ պահպանումը կրնա՞յ կատարուիլ հայրենալքման հետեւանքով անհարկի կերպով աճող սփիւռքով:

Միշտ կը յիշեմ, եւ կը յիշեցնեմ, որ Պղատոն Սոկրատի ըսել կու տար որ «հարցումները աւելի կարեւոր են, քան անոնց տրուած պատասխանները»:

### ԿԵԴՐՈՆԱՑՄԱՆ, ԱՊԱԿԵԴՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՍԻՔՈՏՌԱՄՆԵՐ (PSYCHODRAMES)

Այս ենթահողի վրայ կը ծագին նաեւ այլ խնդիրներ, որոնք կը բարդանան, երբ նկատի չեն առնուիր ժամանակը, ընկերամշակութային փոփոխութիւնները, տարբերութիւնները եւ ակնկալութիւնները, որոնց կը փորձենք լուծումներ գտնել աւանդութիւններու եւ հանգամանաւորական իրաւունքներու կառչելով:

Հայաստանեայց եկեղեցիի «մէկութիւն»ը պէտք է պահպանել, թէեւ յոռեգոյն տարակարծութիւններու եւ վէճերու ընթացքին ան կասկածի առարկայ չէ եղած: Այսինքն, դաւանական (իմա՛ աստուածաբանական) խնդիրներ չկային եւ չկան, օրինակ, Էջմիածին-Անթիլիաս անհասկացողութիւններուն մէջ: Այս իրողութիւնը բաւարար չափով չէ ըսուած, որպէսզի էկլեզիան, սեղմ շրջանակէ դուրս եղող ժողովուրդը գիտնայ: Բայց եղած են եւ կան կազմակերպական-վարչական (իմա՛ իրաւասութեան) խնդիրներ, որոնք կրնան լուծուիլ ոչ թէ յաւելեալ իրաւունքի ձեռքբերման ձգտելով, այլ զարգացնելով յաւելեալ պարտաւորութեան գիտակցութիւն, առանց դիմելու տապարի հարուածներով մաքրագործումներու, ինչպէս այդ կըլլար պատմութիւն դարձած խորհրդային դրախտին մէջ, եթէ յիշողութիւնները թարմացնենք: Այսօր ալ տասնեակներով եկեղեցականներ կարգաթող կամ կարգալոյծ կըլլան: Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս: Այժմ, ժողովրդավարական ըմբռնումներու հետ քայլ պահելով, ընտրական, կազմակերպական, վարչական եւ նշանակումներու պարագային, անհրաժեշտ է միամտութիւններէ հրաժարիլ եւ թոյլ տալ, որ ապակեդրոնացման եւ ինքնակառավարման սկզբունքները գործեն, թեմը, ընդհանրապէս թեմերը, նախաձեռնեն եւ գործեն, յարգելով սկզբունքներ, օրէնքներ եւ ընկերային-քաղաքակրթական եւ մշակութային տարբերութիւններ եւ ինքնութիւններ, ստեղծելով միութիւն փոխըմբռնման եւ փոխադարձ հասկացողութեան գետնի վրայ, առանց տապարի հարուածներու, diktat-ներու, որոնք, վերջին հաշուով, կառուցողական չեն:

Ստեղծուած անհաճոյ դրութիւնը դարմանելու համար տեսանկիւն եւ վարուելակերպ պէտք է փոխել:

Յաւելեալ պարտաւորութիւն՝ ազգային ծառայութեան համար, ոչ թէ յաւելեալ իրաւունք՝ շահախնդրութիւններով, փառասիրութեան եւ իշխանատենչութեան համար: Այս իմաստութիւնը եթէ գերակշիռ ըլլայ, «խնդիրներ»ը կը լուծուին: Բայց այդ ընելու համար, օրէնքի կողքին անհրաժեշտ են իրաւ ղեկավարումը, ոչ թէ պարտադրուած, այլ ետեւէն անդին ճառագայթող իրաւ հեղինակութիւնը: Այս՝ ընդհանրապէս, ոչ միայն եկեղեցիի պարագային, որուն առթած ցնցումները այսօր կը մղեն մտածելու:

Տարիներէ ի վեր «խնդիրներ» կան թեմերու մէջ: Անոնք կան մեր պատմութենէն անկախ, մեր ժողովուրդի ապրած երկիրներու օրէնքներու, բարքերու եւ արժէքներու ազդեցութեան հետեւանքով: Իրողութիւն է, եւ պէտք չէ զայն շրջանցել, Հայաստանեայց եկեղեցին, հակառակ ուղղակի եւ անուղղակի խոչընդոտներու, պահած է իր հոգեւոր միութիւնը եւ կառոյցները, բայց զարգացած են կազմակերպական եւ մտայնութիւններու տարբերութիւններ: Արեւմուտքի մէջ, նոյնատեսակ օրէնքներ մշակուած են բոլոր կազմակերպութիւններու համար, նաեւ՝ կրօնական: Օրինակ, Արեւմուտքի մէջ, նաեւ խորհրդային աշխարհի ու անոր փլուզման հետեւանքով ծնունդ առած հին-նոր երկիրներու մէջ, ամուսնութիւն, ամուսնալուծման դատ եւ որոշում աշխարհիկ օրէնքներու ենթակայ են, մինչ անոնք կը տնօրինուին կրօնական հաստատութիւններու կողմէ՝ այլ երկիրներու մէջ: Այսպէս, Լիբանան, Սուրիա, այդ խնդիրները կրօնական հաստատութիւններու իրաւասութիւններուն մաս կը կազմեն: Հայաստանեայց եկեղեցին եւ համայնքը իրենք չեն ստեղծեր այդ երկիրներու օրէնքները եւ ստիպուած են պատշաճիլ:

Ֆրանսան յատկանշական պարագայ է: Եկեղեցական կազմակերպութիւն(ներ)ը ֆրանսական օրէնքով սահմանուած եւ գործող անջատ միութիւններ են: Հայկական եկեղեցիները կը պատկանին «միութիւններ»ու, զորս կը կոչեն «կրօնական ընկերակցութիւն»ներ: Անոնց կապը ցարդ կառուցային չէր, այլ սոսկ բարոյական: Առաջնորդ սրբազանը իրաւական հեղինակութիւն չունէր: Տարիներու աշխատանքէ ետք, Ֆրանսան կրօնական ընկերակցութիւնները ներառնելով, վերածուեցաւ ԹԵՄի, եւ ընկերակցութիւնները՝ ԾՈՒԽի, իրենց համապատասխան խորհուրդներով: Այս կառոյցով, կրօնական ընկերակցութիւնները անջատ եւ անկախ կազմակերպութիւններ չէին: Եւ կարելի կը դառնային վերահսկողութիւնները, կը սահմանափակուէին հանգամանքներու «ազատութիւններ»ը:

Ցարդ, այդ բոլոր կազմակերպութիւններուն համար, ԹԵՄի ստեղծումը նախորդած ամբողջ ժամանակաշրջանին համար, իսկական գնահատման եւ հաշուեքննական առարկայական ուսումնասիրութիւն եւ գնահատում (audit) չեղաւ եւ չհրապարակուեցաւ, ինչ որ պատճառ էր, եւ է, ենթադրութիւններու, որոնք երբեմն կը դառնան զրպարտութիւն, կամ պարզապէս բամբասանք, անկարելի դարձնելով ԹԵՄի կառավարումը: Աւելցնենք ԹԵՄ ըլլալու եւ ղեկավարելու փորձի պակասը տարբեր խորհուրդներու մէջ, նաեւ եկեղեցիի եւ ընդհանրապէս պատմութեան տեղեկութիւնը, ինչ որ առիթ կու տայ ներսէն եւ դուրսէն «տիքթաք»ներով գործելու ոճի, միջամտութիւններու, ուրկէ որ ալ գան անոնք, որոնք կը յանգեցնեն, ժողովուրդի եւ ժողովրդավարութեան հակակշռի բացակայութեան՝ կղերապետական ընթացքի, եւ անոր մերժումի պարագային՝ տագնապի:

Այս պղտորութիւններու պատճառով, արեւմտեան սփիւռքը, մասնաւորաբար եւրոպական ցամաքամասի վրայ, Հայաստանեայց եկեղեցիի բաղկացուցիչ կառոյցները «խնդիրներ» ունին, ոչ-կրօնական բնոյթի պառակտումներ: Ժողովներ, անդադրում երթեւեկ, մերժումներ: Երբ հայոց եկեղեցի կայ, պառակտումներու ճնշման ներքեւ, կրօնական նոր համայնք կը ստեղծուի եւ ոչ-հայկական եկեղեցիին մէջ տեղի կունենան արարողութիւնները: «Փսիքոտռամ»ներ՝ սկսած, տեւող: Անոնց վրայ կը գումարուին իրաւ կամ սխալ գայթակղութիւններ, երբ «ներքին» համարուած հարցերը լուծելու համար (օրինակ՝ ընտրութիւն պետական-դատական հսկողութեամբ) կը դիմուի դատարան, կամ Ս. Էջմիածինէն ղրկուած եկեղեցական մը կամբաստանուի, կը դատապարտուի որպէս քրէական յանցաւոր եւ հսկողութեան ապարանջանով ստիպուած է ապրիլ: Ժողովրդական իմաստութիւնը կըսէ՝ «առանց կրակի մուխ չըլլար», բայց ենթական կը պաշտպանուի եւ չի վերադառնար հոն ուրկէ եկած էր, յաւելեալ նիւթ մատակարարելով վէճերու եւ քննադատութիւններու:

Այս անփառունակ կացութիւնը պիտի շարունակուի, քիչ մը աւելի շեշտելով արեւմտեան աշխարհի կրօնքի հանդէպ անտարբերութիւնը, որմէ զերծ չեն մեր համայնքները, քիչ մը աւելի տկարացնելով սփիւռքի ներազգային հիւսկէնը:

Ո՞վ, ի՞նչ պիտի շահի եւ ո՞ւր հասցնելու համար հայ համայնքները:

Միշտ պէտք է կրկնել սոկրատեան իմաստութիւնը. «Հարցումները աւելի կարեւոր են, քան անոնց տրուած պատասխանները»...

### ՊԱՅԹԻՒՆԱՎՏԱՆԳ ԿԱՑՈՒԹԻՒՆ ՄԸ՝ ՈՐ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԵՑԱՒ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆՈՎ

Կացութիւնը այսպէս կրնար երկար տեւել, ներքնապէս փտեցնելով համայնքի ուժերը, եթէ հաւաքաբար դէմ յանդիման չգտնուէինք Նորվան արք. Զաքարեանի անսպասելի առաջնորդական պաշտօնէ հրաժարականին:

Այս հրաժարականը, ըստ ձեւի եւ ըստ խորքի, ընթացիկ ըսի-ըսաւներէ անդին, ԹԵՄի իւրաքանչիւր անդամը պէտք է մղէ մտածելու: Ոչ միայն պաշտօնի վրայ գտնուողները, այլ նաեւ ժողովուրդը, շարքային հայը, ան ծուխի մը անդամ ըլլայ թէ ոչ, այսինքն էկլեզիան, որ իսկական տէրն է եկեղեցիին:

Իմանալով սրբազանի հրապարակային ելոյթը, վերահասու եղայ, որ առաջնորդական պաշտօնէ իր հրաժարական գիրը ղրկուած էր Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսին, մինչդեռ, ինք ընտրուած էր Ֆրանսայի թեմի պատգամաւորներուն կողմէ: Իսկ Կաթողիկոսական պատուիրակի պաշտօնէ հրաժարման գիրը բնական է որ ղրկուի Կաթողիկոսին:

Առաջնորդի եւ Կաթողիկոսական պատուիրակի հանգամանքները տարբեր են եւ եղած պէտք է որ ըլլային նաեւ անցեալին: Հռոմի սրբազան քահանայապետը, տարբեր երկիրներու մէջ, ունի իր պատուիրակները (Nonce Apostolique), ինչպէս Փարիզի մէջ, որ ունի իր Առաջնորդ արքեպիսկոպոսը, ինչպէս Լիոնը, Մարսիլիան եւ ուրիշ քաղաքներ:

Ինչպէ՞ս բացատրել եւ հասկնալ առաջնորդական պաշտօնէ հրաժարման գիրի ուղղակի Կաթողիկոսին ղրկուելու պարագան: Հրաժարական մը միշտ կունենայ իր դրդապատճառը: Կաթողիկոսը առաջնորդ սրբազանի հոգեւոր մեծաւորն է, բայց իր գործին եւ գործունէութեան պատասխանատուն Թեմական խորհուրդն է: Եթէ առաջնորդ սրբազանը, նման ծանրակշիռ որոշում ուզած է նախ հաղորդել իր մեծաւորին, կարդարանայ:

Արդ, Թեմական խորհուրդին կը մնայ քննել այս հրաժարման իսկական դրդապատճառները, ի հարկին յառաջացնելով յատուկ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ, հրապարակելով այդ քննութեան արդիւնքները: Նկատի ունենալով, որ այս հրաժարումը կրօնական բնոյթ չունի, ան պէտք է որ քննուի Թեմական խորհուրդին կողմէ, յետ քննութեան ընդունուի կամ մերժուի: Առաջնորդի մը իր պաշտօնէն հրաժարումը փակ շրջանակի մը չի վերաբերիր եւ զանգուածը իրաւունք ունի գիտնալու իսկական պատճառները: Այս պարզ հրապարակայնութեան եւ թափանցիկութեան խնդիր է, եւ յարգանք՝ Թեմական խորհուրդին եւ առաջնորդին վստահութիւն տուած ժողովուրդին նկատմամբ:

Առաջնորդ սրբազանը, իր տարբեր ելոյթներու ընթացքին, սրտի ցաւով խօսեցաւ այն բազմաթիւ պատճառներուն մասին, որոնք զինք մղած են հրաժարելու: Կը խորհիմ, որ Թեմական խորհուրդը, ի հարկին առաջարկուած քննիչ մարմինը, պէտք է լսէ սրբազանը եւ հրապարակէ այդ լսումներու արդիւնքները: Ժողովուրդը գիտնալու իրաւունք ունի, քանի որ ան է ի վերջոյ իսկական դատաւորը:

Մամուլի մէջ լոյս տեսած տեղեկութիւններէն ի յայս կու գայ (տե՛ս

# Միջազգային

Նոր Յառաջ), որ Ամենայն հայոց կաթողիկոսին «պաշտպանեալ»ն է վերեւ նշուած եւ դատարանի հետ խնդիրներ ունեցող եկեղեցականը: Կըսուի, նոյն թերթին մէջ, որ խնդրայարոյց եկեղեցականի պարագան խոր տարակարծութեան պատճառ է Կաթողիկոսին եւ Առաջնորդին միջեւ: Աւելին, Առաջնորդը, արքեպիսկոպոս մը, տեւաբար քննադատութեան եւ արհամարհանքի թիրախ եղած է իր հոգեւոր պետին կողմէ, այնքան՝ որ կացութիւնը հալածանքի բնոյթ ստացած է: Յառաջադէմ երկիրներու մէջ, աշխատավայրի մէջ բանաւոր հալածանքը յատուկ բնորոշում ունի, կըսեն՝ harclement, եւ ան օրէնքով դատապարտելի է: Թեմական խորհուրդին պարտականութիւնն է այս խնդրին յստակացումը, յանուն արդարութեան, առանց իրականութիւնները ջնջելու, յանուն ճշմարտութեան եւ արդարութեան:

Առաջնորդ սրբազանը հեզահամբոյր մտաւորական մըն է, որուն նախաձեռնութիւնները պատմական նշանակութիւն ունին Ֆրանսայի մէջ: Ան է որ Լիոնի Institut catholique-ի մէջ ստեղծեց հայկական աստուածաբանական կաճառ: Պէտք չէ մոռնալ, որ հակառակ թերահաւատութիւններու, ինք եղաւ ստեղծողը Լիոնի հայկական վարժարանին: Այժմ, ոգի ի բռին կաշխատի Ալֆորվիլի հայկական դպրոցի կառուցման, նոյնիսկ եթէ անդուռ բերաններ արհամարհանքով զինք «իշխալիս» համարեն, ինչպէս ուրիշներ, նման պարագայի մը կըսէին «ջուրի մակերեսին տրուած սուրի հարուած» (un coup dռpռe dans leau):

Առաջնորդ սրբազանը հրաժարած է: Կըսէ, որ իր որոշումը անդառնալի է: Թէեւ անգլիացին կըսէ, որ «երբեք պէտք չէ ըսել երբեք» (never say never):

Ստեղծուած կացութիւնը առիթ պէտք է ըլլայ թեմական մարմիններու կատարեալ ինքնավարութիւնը վերահաստատելու եւ գործնականացնելու մեր եկեղեցիի բազմադարեան աւանդութիւնը, որ եկեղեցականը կը սպասարկէ եւ ինչ կը վերաբերի կազմակերպական հարցերու, զանոնք կը յանձնանձեն աշխարհականները, այսինքն՝ թեմական խորհուրդները:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ՝ ՎԱՂՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Գտնուելով դէմ առ դէմ ներկայ կացութեան, Թեմական խորհուրդը մեծ պատասխանատուութիւն ունի զինք ընտրող էկլեզիային եւ պատմութեան առջեւ, որպէսզի բարձրաստիճան եւ բարի համբաւ ունեցող եկեղեցական մը ինչ-ինչ հաշիւներու նոխազ չըլլայ:

Առաջին հերթին, առանձին կամ բանիմաց եւ սրտցաւ ազգայիններու անմիջական գործակցութեամբ, աննախընթաց եւ բացասական հետեւանքներով յղի ազգային տեսանկիւնէ սպառնական կացութիւնը պէտք է որ վնասազերծէ, ստանձնելով կացութեան ամբողջական պատասխանատուութիւնը հոգեւոր, ազգային, մշակութային եւ անկախ նախձեռնութիւններու դիմելով:

Կիսամիջոցներով չբաւարարուող ղեկավարութիւն պէտք է:

Նաեւ, էական է, լայնածիր լուսաբանական հանդիպումներ կազմակերպել թեմի բոլոր ծուխերուն մէջ, երթալով դէպի համայնքները, հաստատելով իրաւ երկխօսութիւն հաւասարներու միջեւ:

Առաջին հերթին կոչ պէտք է ընել խորապէս վիրաւորուած հեզ եւ հանդարտաբարոյ եկեղեցականի հասկացողութեան եւ համագործակցութեան, յետս կոչել տալով առաջնորդական պաշտօնէ անոր հրաժարականը: Թեմական խորհուրդը միաժամանակ պարտի երաշխաւորել Առաջնորդ սրբազանի վարկն ու հեղինակութիւնը, առանց որոնց ան կը դառնայ բարոյազրկուած ոմն, չի կրնար գործել:

Ապա, Ս. Էջմիածինի հետ սրտբաց եւ կառուցողական բնոյթով զրոյց պէտք է ունենալ, Թեմական խորհուրդի կողքին բանիմաց ազգայիններով, կարելի դարձնելու համար թեմի լիակատար ինքնակառավարումը, միջամտութիւնները սահմանափակելով, զանոնք հասցնելու համար նուազագոյնի:

Թեմին մէջ գործելու կոչուած եկեղեցականներու ընտրութիւնը կը կատարէ Թեմական խորհուրդը, առաջնորդ սրբազանին հետ, սահմանելով նախապայմաններ: Այդ նախապայմաններուն մէջ, պատրաստութեան կողքին, նկատի կառնուին համայնքի իւրայատկութիւնները: Այսպէս, պաշտօնի կոչուող եկեղեցականը պարտի տիրապետել արեւմտահայերէնի, զայն օգտագործել հօտին հետ հաղորդակցութեան բոլոր մակարդակներուն: Հրաւիրուող եկեղեցականներուն հետ կը կնքուի տեւողութեան համաձայնագիր, փորձի ժամանակաշրջանի մը համար, մէկ կամ երկու տարուան, որուն աւարտին կը կնքուի նոր համաձայնագիր, ըստ գնահատումներու:

Թեմին հետ համաձայնագիր կնքած եկեղեցականները ամբողջական կերպով ենթակայ կըլլան Թեմական խորհուրդին եւ առաջնորդին, կը հետեւին անոնց տնօրինումներուն:

Որպէսզի կարելի ըլլայ ունենալ եկեղեցիի եւ հօտի համար քաղաքակրթական-մշակութային նոյն աւազանէն եկող սպասաւորներ, լուսաբանական աշխատանքով կոչ կըլլայ կոչումներու, ամուսնացեալ եւ կուսակրօն քահանայութեան թեկնածուներու, որոնց պատրաստութեամբ կը զբաղի թեմը, զանոնք ապա ղրկելով Ս. Էջմիածին, Երուսաղէմ, կամ այլուր, կատարելագործելու համար իրենց գիտելիքները:

Թեմական խորհուրդի աշխատանքները դիւրացնելու, անոնց թափ տալու եւ առաջնորդ սրբազանին օժանդակելու համար, առաջնորդարանը հարկ է օժտել ձեռնհաս դիւանապետով մը, գործադիր, եւ ի հարկին ծրագրող:

Թեմական խորհուրդը, Առաջնորդ սրբազանին հետ, կը մշակէ անմիջական, մօտաւոր եւ հեռաւոր ապագայի ծրագիրներ (կրօնական դաստիարակութեան, դպրոցներու, եկեղեցաշինութեան), ուժականութիւն տալու համար Հայաստանեայց եկեղեցիին եւ անոր համայնքներուն:

Այս եւ այլ աշխատանքներու համար հարկ է լսել ժողովուրդը, յաղթահարել անոր անտարբերութիւնը եւ ուժականութիւն տալ համայնքներուն:

Առաջնորդ սրբազանին իր պաշտօնէն հրաժարման գիրը պիտի կարենա՞նք վերածել արթնութեան թափի, թէ՞ երեւոյթը պիտի մնայ դիպուածի մակարդակին եւ պիտի շարունակենք մահաքունի տանող լճացումը: Այս ալ հարցում էր:

Չի բաւեր եկեղեցիին բակը, կիրակիի պատարագէն ետք քանի մը սրտցաւ խօսքեր փոխանակել: Ազգը եւ եկեղեցին աւելիին կարիքը ունին, նաեւ շաբթուան միւս օրերուն, առանց բաւարարուելու բան չնշանակող կարգախօսներով եւ եսերու բաւարարութիւն տուող դատարկ հանգամանքներով, հրաւէրներով, լամբակին կախուած շքանշաններով:

Ի՞նչ ընել եւ ինչպէ՞ս, որ մեր վաղը այսօրուընէ աւելի լաւ ըլլայ: Միշտ կրկնելով, որ Հայոց եկեղեցին ազգային հիմնական եւ հիմնարար կառոյց եղած է եւ է:

**ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ**
**Ֆրանսա**
**(կրճատումներով)**

## Աբբաս. «Իսրայելի հետ ամեն մի համաձայնագիր կդրվի հանրաքվեի»

*Հաշտության բանակցությունները վերսկսվելու են*



**Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը հորդանանյան «Ալ Ռայ» թերթին տված հարցազրույցում հայտարարել է, որ Իսրայելի հետ ստորագրվելիք ամեն մի համաձայնագիր պետք է հավանություն ստանա հանրաքվեի միջոցով:**

**Դրա հետ մեկտեղ նա չի պարզաբանել, թե ով է մասնակցելու հանրաքվեին՝ միայն Այսրհորդանանի եւ Գազայի պաղեստինցինե՞րը, թե՞ նաեւ հարեւան երկրների գաղթակայաններում ապրողները:**

**Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն նույնպես խոստանում է հանրաքվե անցկացնել պաղեստինցիների հետ կնքվելիք հաշտության պայմանագրի առնչությամբ: Մոտ ժամանակներս ԱՄՆ-ում վերսկսվելու են պաղեստինա-իսրայելական հաշտության բանակցությունները, նշում է հորդանանյան թերթը: ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին հույս ունի, որ կողմերը կկարողանան պայմանագիրը ստորագրել 9-12 ամսվա ընթացքում:**

**Մահմուդ Աբբասը հայտարարել է, որ ինքը կուզենար հաշտության բանակցություններում քննարկել առաջին հերթին սահմանների հարցը, որպեսզի երաշխավորվի Պաղեստինի պետության շուտափույթ ստեղծումը: Նրա խոսքերով, պաղեստինցիներն ակնկալում են պետության ստեղծում 1967 թ. սահմաններով եւ Արեւելյան Երուսաղեմ մայրաքաղաքով:**

**Ըստ Աբբասի, Պաղեստինի պետության կազմավորումից հետո հնարավոր կլինի քննարկել Հորդանանի հետ համադաշնություն ստեղծելու հարցը, բայց կտրականապես մերժել է Այսրհորդանանի պաղեստինցիների Հորդանան արտագաղթելու հնարավորությունը:**

## Երկրաշարժից տասնյակ զոհեր Չինաստանում



**Չինաստանի հյուսիս-արեւմուտքում գտնվող լեռնային եւ սակավաբնակ Գանսու նահանգում հուլիսի 22-ին արձանագրվել են ստորգետնյա ուժեղ ցնցումներ, որոնց հետեւանքով կան զոհեր եւ ավերածություններ: Ամերիկյան երկրաբանական ինստիտուտի տվյալները վկայակոչելով՝ Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ առաջին ցնցումն արձանագրվել է տեղական ժամանակով 7-ն անց 45 րոպեին: Էպիկենտրոնը եղել է 9,8 կմ խորության մեջ: Չինացի սեյսմագետները խոսում են 6,6 մագնիտուդով երկրաշարժի մասին, մինչդեռ ամերիկացիներն արձանագրել են 5,98 մագնիտուդ: Մեկուկես ժամ անց նույն շրջանում տեղի է ունեցել 5,6 մագնիտուդով երկրորդ ցնցումը:**

**Գանսուի սեյսմաբանության բյուրոյի ղեկավարներից մեկը Ֆրանսպրեսի թղթակցին հայտնել է. «Լրջորեն վնասվել է ավելի քան 21 հազար շենք, փլուզվել է առնվազն 1200 շենք»: Երկու ուժեղ ցնցումներին հաջորդել են 371 համեմատաբար թույլ հետցնցումներ:**

**Երկրաշարժի հետեւանքների վերացման աշխատանքներին, փրկարարներից բացի, մասնակցում է 500 զինծառայող:**

**Չինական աղբյուրները հաղորդում են, որ երկու ուժեղ ցնցումները զգացվել են Գանսուի հարեւան Շանսի նահանգի մայրաքաղաք Ցզիանում, որը ավելի քան 400 կմ հեռու է երկրաշարժի օջախի վայրից: Սինհուա գործակալության տվյալներով, լրջորեն տուժել են Մեյչուան եւ Պումա բնակավայրերը: Տեղացիների խոսքերով, երկրաշարժը զգացվել է ամբողջ 1 րոպե:**

**«Ֆիգարո» թերթը հիշեցնում է, որ այս տարվա ապրիլին հարեւան Սիչուանի նահանգում 6,6 մագնիտուդով երկրաշարժից զոհվեց 200 մարդ, իսկ 2008 թվականին նույն նահանգում 8 մագնիտուդով ավերիչ երկրաշարժի հետեւանքով զոհվել եւ անհետ կորել էր մոտ 90 հազար մարդ:**

**Ինչ վերաբերում է Գանսուին, պատմությանը հայտնի է 1920 թվականին այնտեղ արձանագրված 8,5 մագնիտուդով երկրաշարժը, որի հետեւանքով զոհվեց ավելի քան 230 հազար մարդ:**

## Փարիզի արվարձաններում անկարգություններ փարանջայի պատճառով




**Լույս շաբաթ գիշերը Փարիզի Տրապ արվարձանում (Իվլինի նահանգ) ծայր առած եւ հաջորդ գիշեր շարունակված անկարգությունները երկուշաբթի առավոտյան գրեթե ավարտվել էին: «Լիբերասիոն» թերթը հաղորդում է, որ կիրակի օրվանից Տրապում գործում են ոստիկանության հատուկ ջոկատներ, որոնք 30 հազար բնակիչ ունեցող այդ քաղաքում կմնան մինչեւ անկարգությունների ավարտը:**

**Երկուշաբթի առավոտյան RTL հեռուստաալիքին տված հարցազրույցում Ֆրանսիայի ներքգործնախարար Մանյուել Վալսը հայտարարել է, որ Տրապում եւ շրջակա համայնքներում իրավիճակը «վերահսկվում է»: Վերջին երկու օրերին կատարվել է 4 ձերբակալություն:**

**Շաբաթ եւ կիրակի օրերին տեղի էին ունեցել մահմեդական երիտասարդների բախումներ ոստիկանների հետ: Անկարգությունների մասնակիցները հրկիզել էին ավտոմեքենաներ, այրել աղբարկղեր եւ այլն: Խժդժություններ էին եղել ոչ միայն Տրապում, այլեւ մերձակա Էլանկուր, Գիյանկուր եւ Մոնտինյի-լը-Բրետոնյո փոքր բնակավայրերում:**

**Ամեն ինչ սկսվել էր իսլամ ընդունած մի 21-ամյա ֆրանսիացու ձերբակալությունից: Նրա կնոջը հրամայել էին հանել դեմքն ամբողջովին ծածկող չադրան: Ձերբակալվածն ամբաստանվում է ոստիկաններից մեկին խեղդելու փորձի մեջ: Մինչեւ դատավարությունը նա ազատ է արձակված, սակայն իսլամիստները չեն հանդարտվում: Նրանք ոստիկանությանը մեղադրում են սադրանքի մեջ: Իսլամասյացության դեմ պայքարող CCIF կազմակերպությունը պնդում է, թե ոստիկանները վիրավորել են չադրայավոր կնոջը, ինչպես նաեւ ուժ են գործադրել նրա մոր եւ ամուսնու դեմ:**

**2011 թ. ապրիլի 11-ից Ֆրանսիայում գործող օրենքը արգելում է հասարակական վայրերում եւ փողոցում կրել դեմքը լիովին ծածկող հագուստ (փարանջա, նիկաբ եւ այլն): Նման հագուստ կրող կանայք ենթակա են 150 եվրո տուգանքի: Բացառություն են կազմում պաշտամունքի վայրերը եւ թատերական ներկայացումները:**

**Պ. Ք.**

ՌԻՎԱ ԴԵԼ ԳԱՐԴԱ

# Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի ելույթով Իտալիայում մեկնարկեց Musica Riva փառատոնը

Հուլիսի 20-ին Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր` Սերգեյ Սմբատյան) ելույթով մեկնարկեց իտալական Musica Riva 30-րդ միջազգային փառատոնը: Համերգը ղեկավարում էր Բրազիլիան ներկայացնող աշխարհահռչակ դիրիժոր Իսահակ Կարաբչեւսկին, իսկ մենակատարն էր ոչ պակաս հայտնի երաժիշտ` ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Ռուսաստանի պետական մրցանակի դափնեկիր Նատալյա Գուտմանը (թավջութակ, Ռուսաստան): Հատկանշական է, որ առաջին անգամ հայաստանյան նվագախումբը հրավիրվել է որպես հատուկ ընտրված պաշտոնական նվագախումբ` հուլիսի 20-ից օգոստոսի 3-ն Իտալիայի Ռիվա դել Գարդա քաղաքում անցկացվող Եվրոպայում մեծ հեղինակություն վայելող Musica Riva միջազգային 30-րդ փառատոնին:

Նշենք, որ այս փառատոնն ունի 30 տարվա պատմության եւ ձեւավորված ինքնատիպ ավանդույթներ. ամեն տարի նախապատրաստական շրջանում որոշվում է փառատոնի գլխավոր թեման, որի շուրջ էլ ձեւավորվում է ծրագիրը: Համերգների ընթացքում ներկայացվում են դասական եւ ժամանակակից երաժշտության լավագույն նմուշներ:



յուրաքանչյուր տարի մոլորակի տարբեր ծայրերից այն իր հարկի տակ է հավաքում աշխարհահռչակ նվագախմբերի, մենակատարների, պարային խմբերի, երգչախմբերի, արվեստի աշխարհի այնպիսի նշանավոր ներկայացուցիչների, ինչպիսիք են Ալդո Չիկոլինին, Էմանուել Պայուն, Ռենատո Բրուզոնը, Իսահակ Կարաբչեւսկին, Ալեսանդրո Կարբոնարը, Մաուրո Մաուրը, Պլասիդո Դոմինգոն, Գլորիա Գեյնորը, Ջիլբերտո Ջիլը:

Իսահակ Կարաբչեւսկին, ով եղել է Բրազիլիայի ազգային սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորը, նաեւ դիրիժորական աշխատանքի մեծ փորձ ունի Վիեննայի պետական օպերայում, բարձր գնահատեց Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կատարողական մակարդակը եւ նշեց. « Ես ուրախ եմ, որ հենց հայկական այս նվագախումբն է հրավիրվել մասնակցելու Musica Riva-ին»:

Իսկ թավջութակահար Նատալյա Գուտմանն էլ, ով շատ անգամներ է եղել եւ հանդես եկել համերգներով Հայաստանում, խոստովանեց, որ տեղյակ չէր, որ մեր երկրում գործում է երիտասարդական նվագախումբ, այն էլ` այսքան բարձր մակարդակի: «Նվագախմբի հետ հենց առաջին փորձից նկատեցի, որ Հայաստանը շարունակում է ունենալ շատ լուրջ կատարողական դպրոց »:

Փառատոնի շրջանակներում Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հաջորդ ելույթը նախատեսված է չորեքշաբթի հուլիսի 24-ին: Որպես մենակատար հանդես կգա հանրահայտ իտալացի դաշնակահար Ալդո Չիկոլինին:

Իսկ հուլիսի 30-ին մեր երիտասարդ երաժիշտները կներկայացնեն հայկական երաժշտությունը «Հայաստան-Իտալիա. կամուրջ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ» խորագրի ներքո` երեկո, նվիրված հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյակին: Դիրիժոր` Սերգեյ Սմբատյան, մենակատարներ` Ելենա Թանսկի (ջութակ, Ավստրիա), Լուսինե Մկրտչյան (սոպրանո, Հայաստան): Իսկ Արամ Խաչատրյանի անվան ամենամյա 8-րդ միջազգային մրցույթի «Գրան Պրի»-ի մրցանակակիր Ֆյոդոր Ռուդինը (ջութակ) հանդես կգա որպես մենակատար օգոստոսի 1-ին Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի (դիրիժոր` Իսահակ Կարաբչեւսկի) նվագակցությամբ: Ծրագրում` Մենդելսոն:

Եվս մեկ հայ կատարող` Խաչատուր Բադալյանը (տենոր) կմասնակցի օգոստոսի 3-ին Վերդիի «Ռեքվիեմ»-ում` որպես մենակատար, ընկերակցությամբ երիտասարդ, սակայն արդեն հռչակ ձեռք բերած այնպիսի կատարողների հետ, ինչպիսիք են Նկոսազանա Դիմանդեն (սոպրանո), Աննա Վիկտորովան (սոպրանո),Եվգենի Ստավինսկի (բաս): Ավելացնենք, որ Musica Riva փառատոնին Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի մասնակցությունը հնարավոր է դարձել ՀՀ մշակույթի նախարարության, «Լուդինգ» ընկերության հիմնադիր նախագահ մոսկվաբնակ Արթուր Վարժապետյանի, եւ շատ այլ ընկերների աջակցության շնորհիվ:

Օգտվելով առիթից նշենք, որ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը վերջերս դարձել է Երաժշտական գործակալների միջազգային ասոցիացիայի (International Artist Managers Association, IAMA) անդամ: IAMA-ն միակ համաշխարհային ասոցիացիան է, որ զբաղվում է դասական երաժշտության արտիստների մենեջմենթով: Այն սպասարկում է իր բոլոր անդամների կարիքները եւ նպատակ ունի բարձրացնել երաժշտական ոլորտի կառավարման մասնագիտական չափանիշները: Երաժշտական գործակալների միջազգային ասոցիացիան տրամադրում է մի շարք ծառայություններ: Մասնավորապես, IAMA-ն իր անդամներին տալիս է միջազգային հարկային եւ իրավական խորհրդատվություն, տրամադրում է տեղեկագրեր, կազմակերպում է սեմինարներ, անցկացնում է երիտասարդ արտիստների միջազգային ծրագրեր եւ այլն: IAMA-ին անդամակցում են այն կազմակերպությունները, որոնք պրոֆեսիոնալ մակարդակով զբաղվում են դասական երաժշտությամբ:

Դե ինչ, հուսանք, որ 1954թ. ստեղծված միջազգային հեղինակավոր այս կազմակերպությանն անդամակցումը նվագախմբին թույլ կտա, բարձրացնելով պրոֆեսիոնալ մակարդակը, դասական երաժշտության ոլորտում հասնել նորանոր նվաճումների:

ԳՈՒՐԳԵՆ Ձ. ՉԱԽԱԼՅԱՆ

# Երեւանում նորոգվում են 50-ից ավելի մշակութային, ուսումնական եւ այլ հաստատություններ

Երեւանի քաղաքապետարանի 2013 թվականի տարեկան ծրագրով վերանորոգման ու հիմնանորոգման աշխատանքներ են ընթանում մշակութային, առողջապահական, ուսումնական ու արտադպրոցական հիմնարկությունների 54 շենքերում. դրանց կեսից ավելին` 28-ը, նախադպրոցական ուսումնական հաստատություններ են:

Տարեկան ծրագրում ներառված հաստատությունները որոշվել են ըստ նորոգման անհրաժեշտության գնահատման առաջնայնության, որի շրջանակում առաջնահերթությունը տրվել է նախ տանիքների, ապա կոյուղագծերի եւ սանհանգույցների անհապաղ նորոգման խնդիրներ ունեցողներին: Ըստ այդմ սահմանված չափորոշիչներով ծրագրում ընդգրկվել են նաեւ Երեւանի քաղաքապետարանի ենթակայության 16 գրադարաններ:

Մշակութային եւ առողջապահական մի շարք հիմնարկությունների շենքերի ջեռուցման աշխատանքների կազմակերպման շրջանակում իրականացվում են նաեւ նոր լուսամուտների, դռների տեղադրման եւ ջերմամեկուսացման այլ աշխատանքներ, ինչպես նաեւ ջեռուցման համակարգերի անցկացման ու ընդլայնման ներքին հարդարման աշխատանքներ: Ի դեպ, ջեռուցման ծրագրում ներառվել են նաեւ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը եւ Կ. Դեմիրճյանի անվան թանգարանը:

Մշակութային, առողջապահական, ուսումնական ու արտադպրոցական հիմնարկությունների նորոգման 2013 թվականի տարեկան ծրագրում ընդգրկված են նաեւ 4 երաժշտական դպրոցներ, 2 պոլիկլինիկաներ, 2 մշակութային օբյեկտներ` «ՀայԱրտ» մշակութային կենտրոնի եւ Նոր Նորք մշակույթի կենտրոնի շենքերը:

*Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն*

# «Հենրիկ եւ Գերոնտի Թալալյանների» փառատոնի փակման համերգը

Այսօր, հուլիսի 23-ին, ժամը 19:00-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը (հասցե` Իսահակյան փ. 1շ) տեղի կունենա Թալալյան եղբայրների անվան միջազգային ամենամյա 4-րդ փառատոնի հանդիսավոր փակման համերգը:

Համերգային ծրագրում կհնչեն Լ. Վան Բեթհովեն, Ա. Խաչատուրյան եւ Յ. Բրամս` Ջուլիետա Վարդանյանի (դաշնամուր), ԱՄՆ-ից Մաքսիմ Լանդոյի (դաշնամուր) եւ Վադիմ Լանդոյի (կլարնետ), Գերմանիայից մեր հայրենակից Հովհաննես Մոկացյանի (ջութակ), Ռազմիկ Հովհաննիսյանի (ջութակ), Մերի Դոլմազյանի (ալտ), Արամ Թալալյանի (թավջութակ) կատարմամբ:

Թալալյան եղբայրների անվան միջազգային ամենամյա 4-րդ փառատոնը նվիրվում է Ա. Խաչատրյանի 110-ամյա հոբելյանին: Փառատոնի ողջ ընթացքը` հունիսի 26-հուլիսի 23-ը, ուղեկցվեց համերգային ծրագրերով կոմպոզիտորների, կատարողների մասնակցությամբ Հայաստանից եւ սփյուռքից:

*Մուտքը համերգասրահ ազատ է:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| h/h | Գույքի անվանումը | Պետհամարանիշը | Թողարկման ամսաթիվը | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՄԱԶ 5334 (ԿՍ-3577 Կռունկ) | 087 LS 63 | 1989թ | 1,800,000 |
| 2 | Ֆոլկսվագեն տուարեգ | 100 SL 08 | 2007թ | 10,440,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում` WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի` 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ օգոստոսի 7-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին` մինչև 2013թ օգոստոսի 7-ը, ժամը 14.00-ը:

*ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 1 | Ավտոկայանատեղի | 13.23 | 1,692,000 |
| 2 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 2 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 3 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 3 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 4 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 4 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 5 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 5 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 6 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 6 | Ավտոկայանատեղի | 13.48 | 1,710,000 |
| 7 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 7 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 8 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 8 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 9 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 9 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 10 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 10 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 11 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 11 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 12 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 12 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 13 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 13 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 14 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 14 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 15 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 15 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 16 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 16 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 17 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 17 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 18 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 18 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 19 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 19 | Ավտոկայանատեղի | 20.29 | 2,592,000 |
| 20 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 20 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 21 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 21 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 22 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 22 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 23 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 23 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 24 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 24 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 25 | Միսակյան փողոց 22 շենք, թիվ 25 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում` WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի` 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ օգոստոսի 7-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին` մինչև 2013թ օգոստոսի 7-ը, ժամը 14.00-ը:

*ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Մուրադ-Հոփկինս մենամարտը նախատեսված է հոկտեմբերի 19-ին

Հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Կարո Մուրադի եւ անվանի ամերիկացի բռնցքամարտիկ Բեռնարդ Հոփկինսի մենամարտը կկայանա հոկտեմբերի 19-ին ամերիկյան Ատլանտիկ Սիթիում: Այդ մենամարտում կվիճարկվի Հոփկինսին պատկանող IBF-ի վարկածով կիսածանրքաշային կարգում աշխարհի չեմպիոնի գոտին: Այս մասին հայտարարել է Golden Boy պրոմոութերական ընկերության գործադիր տնօրեն Ռիչարդ Շեֆերը:




Ինչպես հայտնել էինք, 2 բռնցքամարտիկների մենամարտը նախատեսված էր հուլիսի 13-ին Նյու Յորքում: Կարո Մուրադն արդեն սկսել էր նախապատրաստվել մարզական իր կարիերայի ամենավճռորոշ մենամարտին, սակայն ամերիկյան իշխանությունները նրան մուտքի վիզա չէին տրամադրել: Այն ժամանակ Կարո Մուրադը հայտարարել էր, որ լավ է ուսումնասիրել մրցակցին եւ կփորձի օգտագործել վերջինիս սխալներն ու նվաճել IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Դրանից հետո նա կցանկանար ռեւանշի հասնել WBO-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Նաթան Կլեւերլիի նկատմամբ: Հիշեցնենք, որ 2010-ի սեպտեմբերին վերջինիս հետ մենամարտում Կարո Մուրադը 10-րդ ռաունդում նոկաուտի էր ենթարկվել: Պրոֆեսիոնալ բռնցքամարտիկի կարիերայում դա Մուրադի միակ պարտությունն էր: 25 մենամարտ հայ բռնցքամարտիկը շահել է, մեկն ավարտել է ոչ-ոքի: Վերջին մենամարտը Կարո Մուրադն անցկացրել է անցյալ տարվա հունիսի 2-ին Դանիայի Հեռնինգ քաղաքում՝ 8-ռաունդանոց մենամարտում տեխնիկական նոկաուտով հաղթելով Սանդրո Սիպրոշվիլուն:

Բեռնարդ Հոփկինսը պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 63 մենամարտերից 53-ում հաղթել է, 6-ում պարտվել է, 2-ն ավարտել է ոչ-ոքի: Վերջին մենամարտը Հոփկինսն անցկացրել է այս տարվա մարտի 9-ին՝ միավորներով հաղթելով Կլոդ Տավորիսին:

Հուսանք, որ այս անգամ վիզայի հետ կապված խնդիրներ չեն լինի եւ Կարո Մուրադի եւ Բեռնարդ Հոփկինսի մենամարտը վերջապես կկայանա:

## Մամիկոն Մարտիրոսյանը եզրափակեց լավագույն եռյակը

Փոթիում ավարտված Նանա Ալեքսանդրիայի գավաթի խաղարկությունում հանդես եկած հայ շախմատիստներից առավել հաջողը Մամիկոն Մարտիրոսյանի ելույթն էր: B խմբի մրցաշարում Մամիկոնը 9 հնարավորից վաստակած 7 միավորով գրավեց 3-րդ տեղը: Ավարտական 2 տուրերում նա ոչ-ոքի խաղաց Գաբրիել Բեչվարիայի հետ ու հաղթեց Գեորգի Ցխադաձեին: Մրցաշարի հաղթող ճանաչվեց վրացի Սուլխան Սիրբիլաձեն, որը վաստակեց 8,5 միավոր: Ի դեպ, Մարտիրոսյանը միակ պարտությունը կրել էր հենց Սիրբիլաձեից 6-րդ տուրում:

A խմբի մրցաշարում հանդես եկած հայ շախմատիստներից լավագույնը Լեւոն Բաբուջյանի ելույթն էր, որը 6,5 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը: Ընդ որում, նա միայն լրացուցիչ ցուցանիշներով զիջեց 3-րդ տեղը գրաված նույնքան արդյունք ունեցող Գիգա Քուփարաձեին: Բաբուջյանը վերջին 2 տուրերում հաջող խաղաց՝ հաղթելով Գունայ Մամադզադային եւ Գեւորգ Հարությունյանին: Վերջինս 5,5 միավորով գրավեց 10-րդ տեղը: Գեւորգն անհաջող խաղաց վերջնագծում՝ 3 տուրերում վաստակելով ընդամենը կես միավոր: 5,5-ական միավոր վաստակեցին նաեւ Սեդրակ Մաթեւոսյանը (11-րդ տեղ) եւ Արթուր Ղարագյոզյանը (15-րդ տեղ): A մրցաշարի հաղթող դարձավ վրացի Լուկա Պայչաձեն, որը վաստակեց 7,5 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնքան արդյունքի հասած իր հայրենակից Լեւան Պանցուլայային:

Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում հայերից լավագույնն Արտաշես Առաքելյանի ելույթն էր՝ 5,5 միավոր (6-րդ տեղ): 7,5 միավորով հաղթող ճանաչվեց վրացի Նիկա Խվադագիանին: Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում Արման Գրիգորյանը 6,5 միավորով գրավեց 4-րդ տեղը: Գլխավոր մրցանակը շահեց իրանցի Մանի Ջահեդին, որը վաստակեց 8 միավոր: Մինչեւ 8 տարեկանների մրցավեճում Էմիլ Հայրապետյանը 4,5 միավորով 22-րդն էր: Հաղթող դարձավ վրացի Գեորգի Ջիքիան՝ 8 միավոր:

## Արաս Օզբիլիսը հաղթանակ պարգեւեց «Կուբանին»

Նոր մրցաշրջանը շատ հաջող է սկսել ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի եւ Կրասնոդարի «Կուբանի» կիսապաշտպան Արաս Օզբիլիսը: ՌԴ առաջնության 2-րդ տուրում էլ Օզբիլիսը դարձավ գոլի հեղինակ, որի շնորհիվ «Կուբանը» հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթեց «Տոմին»: «Կուբանը» ՌԴ առաջնությունում անդրանիկ հաղթանակը տոնեց: Թիմն արդեն 14 խաղ ՌԴ առաջնություններում չի պարտվել: 4 միավորով «Կուբանը» 6-րդ տեղում է: Իսկ Օզբիլիսը 2 գնդակով առաջնության լավագույն ռմբարկուների ցանկում է, որը 3 գոլով գլխավորում է «Սպարտակից» «Ռոստով» տեղափոխված Արտյոմ Ձյուբան:

Մոսկվայի «Սպարտակը» 2-րդ հաղթանակը տոնելով «Ուրալի» նկատմամբ (2-0), 6 միավորով գլխավորեց աղյուսակը: Թեեւ Յուրա Մովսիսյանը գոլ չխփեց, սակայն թիմի գլխավոր մարզիչ Վալերի Կարպինը գոհ էր նրա խաղից: Յուրան փոխարինվեց 62-րդ րոպեին: «Ուրալի» կազմում հանդիպմանը մասնակցեցին ՀՀ հավաքականի խաղացողներ Էդգար Մանուչարյանն ու Արթուր Սարկիսովը, որոնք 2-րդ խաղակեսում փոխարինվեցին:

Անհաջող է մեկնարկել «Կրասնոդարը», որը 2 խաղում ընդամենը մեկ միավոր է վաստակել եւ ընթանում է 11-րդ տեղում: Միակ միավորը թիմը վաստակեց «Ռոստովի» հետ արտագնա խաղում (2-2): «Կրասնոդարի» կազմում Մարկոսը փոխարինման դուրս եկավ 84-րդ րոպեին, իսկ ավելացված ժամանակում դեղին քարտ ստացավ:

## Ղարամյանը հաղթողին զիջեց լրացուցիչ գործակիցներով

Շվեյցարիայի Բիլ քաղաքում ընթացող շախմատային փառատոնի շրջանակներում անցկացված արագ շախմատի մրցաշարում ֆրանսահայ գրոսմայստեր Տիգրան Ղարամյանը 9 հնարավորից վաստակած 7 միավորով գրավեց 5-րդ տեղը: Նա կես միավորով զիջեց մրցաշարի հաղթող, հնդիկ գրոսմայստեր Պենտալա Հարիկրիշնային:

Ղարամյանն ավելի հաջող հանդես եկավ Ֆիշերի շախմատի մրցաշարում՝ 7 հնարավորից վաստակելով 6 միավոր: Նա միայն լրացուցիչ գործակիցներով գլխավոր մրցանակը զիջեց նույնքան արդյունքի հասած հոլանդացի Յան Սմիթսին:

## Միջին դիրքերում

Իսպանիայի շախմատի մրցաշարի հաղթող ճանաչվեց նորվեգացի գրոսմայստեր Սիմեն Ագդեստեյնը, որը 9 հնարավորից վաստակեց 8,5 միավոր: Կարեն Գրիգորյանը 6,5 միավորով 7-րդ տեղը զբաղեցրեց: Վերջին 3 տուրերում Կարենը հաղթեց Միգել Մինոզին ու Լազարո Լորենցոյին, պարտվեց Նազար Ֆիրմանին:

Հովիկ Հայրապետյանը 6 միավորով զբաղեցրեց 14-րդ տեղը, իսկ Մարկ Բասենցյանը 4,5 միավորով 54-րդ հորիզոնականում հանգրվանեց:

## Հայերից լավագույնը Գաբուզյանի արդյունքն է

Մինսկում վերջնագիծը հասած շախմատի մրցաշարում Հայաստանը ներկայացրած 4 շախմատիստներից առավել հաջող հանդես եկավ գրոսմայստեր Հովհաննես Գաբուզյանը, որը 9 հնարավորից վաստակած 7 միավորով գրավեց 5-րդ տեղը: Ընդ որում նա միայն կես միավոր զիջեց մրցաշարի հաղթող, բելառուս Ալեքսանդր Կոչեեւին: Ավարտական 2 տուրերում նա հաղթեց Մարինա Ռոմանկոյին եւ Արտաշես Մինասյանին:

6,5 միավորով 10-րդ տեղը գրավեց Սամվել Տեր-Սահակյանը: Արտաշես Մինասյանը 6 միավորով 20-րդն է, իսկ Հայկ Մարտիրոսյանը 5 միավորով գրավեց 40-րդ տեղը:

### ԹԵԹԵՎ ԱՏԼԵՏԻԿԱ

## Լեւոն Աղասյանը Եվրոպայի չեմպիոն

Իտալիայի Ռիետի քաղաքում թեթեւ ատլետիկայի Եվրոպայի պատանեկան առաջնությունում գերազանց հանդես եկավ եռացատկորդ Լեւոն Աղասյանը: Նրա 6 ցատկերից ամենահաջողը 3-րդն էր, որի ժամանակ հայ մարզիկը գրանցեց լավագույն արդյունքը՝ 16,01 մետր: Այդ ցուցանիշով Աղասյանը հռչակվեց Եվրոպայի պատանիների չեմպիոն՝ ցույց տալով մրցաշրջանի լավագույն արդյունքը:

Լեւոնը 3 սմ-ով գերազանցեց 2-րդ տեղը գրաված ֆինն Քրիստիան Պուլիի ցուցանիշը: 3-րդ մրցանակակիր դարձավ ռուսաստանցի Վլադիմիր Կոզլովը՝ 15,85 մետր:

## Միաժամանակյա խաղաշար Լեւոն Արոնյանի մասնակցությամբ

Լեւոն Արոնյանը երեկ Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի տանը միաժամանակյա խաղի սեանս անցկացրեց լրագրողների եւ հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Միջոցառումն անցկացվեց «Սպորտը հանուն հավասար հնարավորությունների» խորագրի ներքո, որը նպատակ ունի հանրության ուշադրությունը հրավիրել հաշմանդամություն ունեցող մարդկանց հիմնախնդիրներին:



Նմանատիպ միջոցառումները Հայաստանում կազմակերպում են «Հույսի կամուրջ» եւ «Առաքելություն Արեւելք» կազմակերպությունները, որոնց աջակցել էր շախմատի Հայաստանի ֆեդերացիան: Լեւոն Արոնյանն արդեն 4-րդ անգամ մասնակցեց նման միջոցառմանը:

## Մովսիսյանը 5-րդ անգամ հռչակվեց փառատոնի արքա

Սերգեյ Մովսիսյանը շարունակում է իր հաղթարշավը շախմատի մրցաշարերում: Նա Բանսկա Շտյավնիցա քաղաքում անցկացված փառատոնի շրջանակներում կենդանի շախմատի մենամարտում պարտության է մատնել Սլովակիայի ներկայացուցիչ Յան Մարկոսին եւ 5-րդ անգամ հռչակվել է փառատոնի արքա: Այս մասին տեղեկացնում է armchess.am-ը:

Նախկինում Մովսիսյանը նման պատվի էր արժանացել 2005-2008-ին՝ պարտության մատնելով համապատասխանաբար գրոսմայստերներ Շտոլին, Նավարային, Հրաչեկին եւ Մարկոսին:

## Հովհաննես Դավթյանը բրոնզե մեդալակիր

Մոսկվայում անցկացված ձյուդոյի «Մեծ սաղավարտ» մրցանակի խաղարկությունում հաջող հանդես եկավ գյումրեցի Հովհաննես Դավթյանը, որը մինչեւ 60 կգ քաշային կարգում դարձավ բրոնզե մեդալակիր: Նա հաջորդաբար հաղթելով ղազախ Աիբեկ Իմաչեւին, ռուսաստանցի Ռոբերտ Մշվիդոբաձեին եւ բուլղարացի Յանիսլավ Գերչեւին, մտել էր կիսաեզրափակիչ:




Այդ փուլում հայ ըմբիշը պարտվեց վրացի Ամիրան Պապինաշվիլուն, որն ի վերջո դարձավ մրցաշարի հաղթող՝ եզրափակիչում պարտության մատնելով բրազիլացի Ֆելիպե Կիտադային: Իսկ Դավթյանը բրոնզե մեդալի համար գոտեմարտում պարտության մատնեց հոլանդացի Միկոս Սալմինենին:

## «Արարատը» հաղթել է սերբական թիմին

Սերբիայում ուսումնամարզական հավաք անցկացնող «Արարատը» ստուգողական առաջին խաղում 2-0 հաշվով հաղթել է տեղի 2-րդ խմբի առաջնության մասնակից «Դունավին»: Հաշիվը 38-րդ րոպեին բացել է Գեւորգ Նռանյանը, իսկ 2-րդ գոլը խփել է թիմում փորձաշրջան անցնող սերբ ֆուտբոլիստներից մեկը:

## Արարատ Առաքելյանը հեռացավ «Բանանցից»

Հայաստանի հավաքականի նախկին պաշտպան Արարատ Առաքելյանը նոր մրցաշրջանում հանդես կգա Կապանի «Գանձասարում»: Նա 1 տարվա պայմանագիր է կնքել ակումբի հետ: Իսկ ահա «Բանանցում» փորձարկվում են մեքսիկացի հարձակվող Ռիկարդո Լարան եւ նիգերիացի պաշտպան Ադիդեջի Ադեյինգան, որը ժամանակին խաղացել է «Փյունիկում»:

Կապանի «Գանձասարը» բավականին լուրջ համալրում է ստացել: Վերջերս թիմի հետ պայմանագիր է կնքել նաեւ ՀՀ հավաքականի պաշտպան Հրայր Մկոյանը, որը մինչ այդ հանդես էր գալիս Չեխիայում: Ավելի վաղ թիմում ընդգրկվել էին փորձառու ֆուտբոլիստներ Շոթա Ջիքիան, Արտակ Գրիգորյանը, Արթուր Բարսեղյանը: Պատրաստվում էր թիմի շարքերը համալրել նաեւ Աղվան Մկրտչյանը, սակայն վերջին պահին նա նախընտրեց մեկնել Լիբանան: Իսկ ահա նախկին գանձասարցի Նոա Կասուլեն, որ մինչ այդ հանդես էր եկել նաեւ «Բանանցում», կարիերան կշարունակի «Ուլիսում»:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ՕՐՎԱ ՀԵՏՔԵՐՈՎ

# Ինչո՞վ են ներդնողներին գրավելու Հայաստանի ազատ տնտեսական գոտիները

*1-ին էջից*

Հայաստանում ազատ տնտեսական գոտու ստեղծման նպատակը օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման, նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Հայաստանից արտահանման ծավալների աճն է եւ նոր աշխատատեղերի ստեղծումը: Եվ «ՌԱՕ ՄԱՐՍ»-ի, եւ «ԵրՄՄԳՀԻ»-ի տարածքներում գործելու են արտադրաարդյունաբերական եւ տեխնիկակիրառական էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության եւ բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի եւ հեռահաղորդակցության՝ ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի եւ նյութերի նախագծման եւ արտադրության ձեռնարկություններ, իսկ «ԵրՄՄԳՀԻ»-ում իրականացվելու են նաեւ այս ճյուղերը սպասարկող գիտական հետազոտություններ եւ մշակումներ, փորձարարակոնստրուկտորական աշխատանքներ: Սակայն երկու գոտիներում կան ոլորտների տարբերություններ:

«ՌԱՕ ՄԱՐՍ»-ի հիմքի վրա ստեղծվող ազատ տնտեսական գոտու ուղղվածություն է լինելու բարձր-գիտատար տեխնոլոգիաների եւ արտադրության (High Tech) զարգացումը, իսկ «ԵրՄՄԳՀԻ»-ի հիմքի վրա՝ նորարարությունների, գիտահետազոտական եւ փորձարարակոնստրուկտորական աշխատանքների (R&D) եւ ԻՏ (IT) զարգացումը: Այս տարածքներում նախատեսվող ներդրումների ընդհանուր ծավալը 2014-ի վերջին կգերազանցի 10 մլն դոլարը: Ազատ տնտեսական գոտիների համար կազմակերպիչը պարտավորվում է ապահովել շահագործողների արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ ենթակառուցվածք՝ տրանսպորտային, ինժեներակոմունալ, գործարար, սպասարկման եւ այլն:

Հայաստանյան ազատ տնտեսական գոտում նախատեսվում է գործունեության համար առաջնահերթություն տալ այն կազմակերպություններին, որոնք հայտնի են համաշխարհային բրենդ հանդիսացող արտադրանքով: High Tech ոլորտում խոսքը LG, Motorola, Panasonic, Philips, Sony, Toshiba, Acer, Dell Inc., Fujitsu, IBM, Sun Microsystems, Apple Inc., Hewlett-Packard Company, Microsoft, Intel Corporation, Adobe, Oracle Corporation, SAP AG, Symantec, Google, Yahoo, Veritas Software, Computer Associates, Borland, Samsung, Hitachi Global Storage Technologies բրենդերի, իսկ R&D ոլորտում Toyota, Daimler, Robert Bosch, Roche, Pfizer, Novartis, Johnson&Johnson, Sanofi-Aventis, GlaxoSmithKline, Merck, Tekeda Pharmaceutical, Siemens բրենդերի մասին է:

Ներկայումս արդեն «Սիտրոնիկս Արմենիա»-ի ներկայացուցիչները նախնական բանակցություններ են սկսել մի քանի միջազգային խոշոր ընկերությունների հետ ազատ տնտեսական գոտիներում՝ նրանց աշխատանքը սկսելու համար: Նախնական բանակցություններով, որպես գործընկեր ներկայանում են՝ GlaxoSmithKline (բրիտանական դեղագործական կազմակերպություն, աշխարհում խոշորներից մեկը), PARAVAN կազմակերպությունների խումբ (ռուսական շուկայում առաջատարներից մեկը անվտանգության համակարգերի, արդյունաբերական ավտոմատիզացման եւ համակարգային ինտեգրացիայի ոլորտում), CargoMatrix, Inc. (ամերիկյան կազմակերպություն, բեռնափոխադրումների եւ լոգիստիկայի ոլորտում ԻՏ լուծումների եւ ծրագրերի մշակման առաջատարներից մեկը), Fabtech (միջազգային կազմակերպություն. բիոտեխնոլոգիական եւ դեղագործական, բարձր տեխնոլոգիական կազմակերպությունների նախագծման, ինժեներիայի եւ հագեցման ծառայություններ մատուցող), Bystronic Laser (կազմակերպություն, ճերտային մետաղի եւ այլ հարթ նյութերի լազերային մշակման ոլորտում լուծումներ առաջարկող) եւ այլ կազմակերպություններ:

Նախնական կանխատեսումներով, ազատ տնտեսական գոտու զբաղեցման ներկայիս տեմպերի դեպքում, «ՌԱՕ ՄԱՐՍ»-ի եւ «ԵրՄՄԳՀԻ»-ի տարածքում կբացվեն զգալի թվով նոր աշխատատեղեր: Մասնավորապես, 2012-2015-ին կանխատեսվում է մոտ 1500 նոր աշխատատեղեր, 2016-2017-ին՝ 3500 եւ 2018-2020-ին այդ թիվը կհասնի 5000-ի:

Տնտեսվարողների համար ազատ տնտեսական գոտում տրամադրվող արտադրա-տնտեսական, գրասենյակային տարածքների վարձակալությունը կարժենա 10 դոլար ամսական 1 քմ համար: Ընդ որում, կախված վարձակալվող տարածքի չափից եւ վարձակալության ժամկետից վարձակալության գինը կարող է ցածր լինել: Վարձակալության գների մեջ ներառված են կոմունալ ծառայությունները (էլեկտրաէներգիա, ջուր, ջրահեռացում, գազամատակարարում), գերարագ ինտերնետը, հեռախոսաֆիկացումը, տարածքի մաքրումը եւ բարեկարգումը, տարածքի շուրջօրյա պահպանությունը:

Եվ թերեւս ամենագլխավորը՝ ի՞նչ են շահելու ազատ տնտեսական գոտում գործունեություն ծավալողները, ի՞նչ արտոնություններից են նրանք օգտվելու: Եկամուտների հարկման, ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքերի բացակայություն, անշարժ գույքի հարկման բացակայություն, արժութային սահմանափակումների բացակայություն, կապիտալի, շահույթի եւ շահութաբաժնի ազատ վերադարձ: Սրանք են այն հիմնական խթանները, որոնք գրավիչ կդառնան հայաստանյան ազատ տնտեսական գոտիներում գործունեություն ծավալողների համար:

Վերջում մեկ անգամ եւս ընդգծենք, որ ազատ տնտեսական գոտիներ չեն կարող տեղափոխվել Հայաստանի արդեն հարկման ընդհանուր դաշտում գործող ընկերությունները եւ այն ընկերությունները, որոնց գործունեությունը չի համապատասխանում ազատ տնտեսական գոտիների ուղղվածությանը: Այսինքն՝ որեւէ ընկերության կողմից ազատ տնտեսական գոտին չի կարող դիտարկվել հարկերից խուսափելու հնարավորություն:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արմենակյան փողոց h.141, 2-րդ հարկ | 7.9 | հասարակական | 5 տարի | 7900 դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ օգոստոսի 7-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2013թ օգոստոսի 7-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Իսակովի 50/16 | կաթսայատուն | 101.76 | 84.56 | 4,450,000 |
| 2 | Լեփսիուսի 6փող. 37շ. 46շին | ոչ բնակելի տարածք | | 39.3 | 4,250,000 |
| 3 | Ռուբինյանց 1շենք h.75 | ոչ բնակելի տարածք | | 14.63 | 3,400,000 |
| 4 | Թումանյան 11 շենք 72 շին | ոչ բնակելի տարածք | | 10.3 | 1,000,000 |
| 5 | Տիչինայի փողոց 34/6 | կաթսայատուն | 58.56 | 51.9 | 3,000,000 |
| 6 | Աբովյան փողոց 62 շենք h.31 | ոչ բնակելի տարածք | | 40.95 | 10,550,000 |
| 7 | Բագրատունյաց 22/6 | կաթսայատուն | 284.82 | 252.84 | 16,700,000 |
| 8 | Շեւչենկոյի 4/4 | կաթսայատուն | 150 | 131.04 | 5,600,000 |
| 9 | Անդրանիկի 122/1 | կաթսայատուն | 384.75 | 281.75 | 20,070,000 |
| 10 | Սուրենյանց փողոց Մեղիկ 2 | կաթսայատուն | 352.2 | 262.7 | 18,500,000 |
| 11 | Նորք Մարաշ 9-րդ փողոց 121/1 | կաթսայատուն | 105.6 | 89.6 | 6,350,000 |
| 12 | Ավետիսյան 70 | կաթսայատուն | 1210 | 566.6 | 120,000,000 |
| 13 | Մազմանյան փողոց h.5/26 | կաթսայատուն | 509.45 | 397.62 | 7,550,000 |
| 14 | Մայիսի 9 փողոց 13/3 | կաթսայատուն | 148.75 | 139.15 | 6,950,000 |
| 15 | Սասունցի Դավիթ 13 | կաթսայատուն | 122.7 | 104.46 | 8,500,000 |
| 16 | Չարենցի 76/6 | կաթսայատուն | 54.82 | 42.04 | 8,600,000 |
| 17 | Քաջազնունու 11 շենք 111 | ոչ բնակելի տարածք | | 350.8 | 14,170,000 |
| 18 | Դավթաշեն ՇՁԿ h. 3 | կաթսայատուն | 20,891.14 | 2,402.60 | 139,300,000 |
| 19 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2,251.36 | 1,244.00 | 363,900,000 |
| 20 | Լենինգրադյան փողոց 38/4 | կաթսայատուն | 219.15 | 161 | 10,550,000 |
| 21 | Արտաշիսյան 3 նրբ 26/3 | կաթսայատուն | 168.32 | 143.37 | 3,800,000 |
| 22 | Արտաշիսյան 60/3 | կաթսայատուն | 220 | 193.29 | 4,200,000 |
| 23 | Գուլակյան 16բ | կաթսայատուն | 203 | 203 | 13,800,000 |
| 24 | Անդրանիկի փ. 40/3 | կաթսայատուն | 337.28 | 287.92 | 21,500,000 |
| 25 | Էրեբունի 14/4 | կաթսայատուն | 170.18 | 145.68 | 9,820,000 |
| 26 | Ուլնեցու փ. 3, փակ.4/3 | կաթսայատուն | 469.01 | 431.60 | 21,500,000 |
| 27 | Շիրակի փ.6/10 | կաթսայատուն | 309.50 | 207.98 | 14,220,000 |
| 28 | Ա.Սարգսյան 5/2 | կաթսայատուն | 127.40 | 99.18 | 6,000,000 |
| 29 | Շիրազի 42/5 | կաթսայատուն | 239.71 | 129.96 | 8,200,000 |
| 30 | Հալաբյան 41/3 | կաթսայատուն | 257.12 | 161.46 | 10,100,000 |
| 31 | Մալխասյանց 23/6 | կաթսայատուն | 169.00 | 144.00 | 9,600,000 |
| 32 | Սեւակի 7/6 | կաթսայատուն | 190.29 | 139.20 | 11,400,000 |
| 33 | Սմբատ Զորավարի 42/3 | կաթսայատուն | 262.26 | 217.11 | 12,650,000 |
| 34 | Ֆուրմանովի 1/1 | կաթսայատուն | 295.85 | 278.97 | 16,600,000 |
| 35 | Զեյթուն 3 թաղ. Լեփսիուսի փող. 37/6 | կաթսայատուն | 194.78 | 163.74 | 10,000,000 |
| 36 | Արշակունյաց պող. 32/4 | կաթսայատուն | 138.17 | 101.13 | 10,900,000 |
| 37 | Հ.Էմինի 80/2 | կաթսայատուն | 214.46 | 180.31 | 12,150,000 |
| 38 | Մամիկոնյանց 41 շենք 6 բնակարան | բնակարան | | 122.50 | 34,100,000 |
| 39 | Մամիկոնյանց 41 շենք 10 բնակարան | բնակարան | | 69.80 | 17,910,000 |
| 40 | Գ-3 թաղամաս h.41 | անավարտ շինություն | 1,021.93 | 1,919.98 | 37,440,000 |
| 41 | Վարդանանց 7շ 76 շին | ոչ բնակելի տարածք | | 32.77 | 3,672,000 |
| 42 | Վարդանանց 7շ 77 շին | ոչ բնակելի տարածք | | 22.92 | 2,574,000 |
| 43 | Նուբարաշեն 2ա շենք 26 շինություն | ոչ բնակելի տարածք | | 118.51 | 10,143,000 |
| 44 | Արտաշիսյան պ., 3 նրբ. 26/2 | կաթսայատուն | 141.75 | 117.06 | 3,033,000 |
| 45 | Շերամի 23/4 | կաթսայատուն | 318.72 | 292.82 | 14,310,000 |
| 46 | Հ Հակոբյան 1/7 | կաթսայատուն | 108.80 | 108.80 | 18,000,000 |
| 47 | Այասի փողոց թիվ 1/3 | կաթսայատուն | 414.50 | 305.70 | 19,800,000 |
| 48 | Բաղրամյան 2 փակուղի 10/1 | կաթսայատուն | 148.85 | 125.44 | 16,200,000 |
| 49 | Մամիկոնյանց փող. 56/9 | կաթսայատուն | 218.24 | 260.50 | 31,545,000 |
| 50 | Դավթաշեն 4 թաղ. ԿՁՀ 2 | կաթսայատուն | 247.00 | 216.00 | 16,290,000 |
| 51 | Դավթաշեն 4 թաղ. ԿՁՀ 3 | կաթսայատուն | 265.50 | 212.30 | 18,000,000 |
| 52 | Հալաբյան 27շ. 75 տարածք | ոչ բնակելի տարածք | | 56.70 | 2,970,000 |
| 53 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.80 | 1,980,000 |
| 54 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.80 | 5,670,000 |
| 55 | Զաքյան փողոց 1շենք 38 տարածք | ոչ բնակելի տարածք | | 58.10 | 6,660,000 |
| 56 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.50 | 195.50 | 7,470,000 |
| 57 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.10 | 18,270,000 |
| 58 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 15,840,000 |
| 59 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 8,865,000 |
| 60 | Սեբաստիա 18/2 | կաթսայատուն | 194.83 | 173.00 | 7,830,000 |
| 61 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 242.50 | 212.75 | 6,030,000 |
| 62 | Կուդինյան 5/3 | կաթսայատուն | 162.97 | 135.50 | 6,750,000 |
| 63 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288.00 | 11,160,000 |
| 64 | Ուլնեցու փողոց 3-րդ փակ. 4/2 | կաթսայատուն | 249.30 | 129.70 | 10,530,000 |
| 65 | Մոլդովական փողոց 50/9 | կաթսայատուն | 192.66 | 163.10 | 7,965,000 |
| 66 | Հ/Ա Բ-2 թաղ. 92 շենքի h.20 | ոչ բնակելի տարածք | | 58.70 | 5,400,000 |
| 67 | Բաղրամյան 30 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 89.70 | 12,690,000 |
| 68 | Նալբանդյան 50 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 14.00 | 1,530,000 |
| 69 | Մամիկոնյանց 1/3 | կաթսայատուն | 307.20 | 280.90 | 21,510,000 |
| 70 | Դավթաշեն 4 թաղ. ԿՁՀ 1 | կաթսայատուն | 247.00 | 216.00 | 14,580,000 |
| 71 | Դավթաշեն 2 թաղ. ԿՁՀ 1 | կաթսայատուն | 237.12 | 206.60 | 11,340,000 |
| 72 | Մ. Բաղրամյան 1 փակ. 14 շ., 162 տարածք | ոչ բնակելի տարածք | | 136.10 | 47,520,000 |
| 73 | Չեխովի 48/4 | կաթսայատուն | 160.25 | 131.30 | 11,475,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ օգոստոսի 7-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ օգոստոսի 7-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 22.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: